



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



ԵՊՀ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԾԱԿՈՒԼՏԵՏ

ԱՅ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ



Հ Ա Յ

ԱՍՏՎԱԾԱՐԱՆ

Գիտական հոդվածների ժողովածու

Դ

ՀՏԴ 2 : 941(479.25)
ՊՄԻՆԻՍՏԻՄ ՍՊԵՏՐՈՒ ՎՃԻՐՉԻՐ
ՊՄԻՆԻՍՏԻՄ ՍՊԵՏՐՈՒ ՎՃԻՐՉԻՐ
Հ 240

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի խորհուրդը

Գրախոս՝ ԳԳ ՊԱՍ ակադ., պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Վ. Բ. ԲԱՂՆՈՒԴԱՐՅԱՆ

Խմբագրական կազմ՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ Եպս. ԺԱՄԿՈՇՅԱՆ

Հ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ	պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.
Ռ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ	պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.
Հ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ	փիլ. գիտ. դոկտ., պրոֆ.
Ա. Գ. ԲԱՆԱՇՅԱՆ	փիլ. գիտ. թեկն., դոց.
Լ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ	պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.

Հ 240 **Չայ աստվածաբան: Գիտական հոդվածների ժողովածու, Գ /**
Աստվածաբանության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ., 2011. 285 էջ:

Չայ աստվածաբան գիտական հոդվածների ժողովածուն անվճար է երևանի պետական համալսարանի Աստվածաբանության և Պատմության ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 2011 թ. կատարած ուսումնասիրությունների արդյունքները, որոնք նվիրված են աստվածաբանությանը, կրոնագիտությանը, պատմությանը և հայագիտությանը:

Ժողովածուում գնտեղված հետազոտությունները հետաքրքիր են աստվածաբանների, կրոնագետների, պատմաբանների, ինչպես նաև հումանիտար գիտությունների տարբեր բնագավառների մասնագետների համար:

ՀՏԴ 2:941(479.25)
ՊՄԻՆԻՍՏԻՄ ՍՊԵՏՐՈՒ ՎՃԻՐՉԻՐ

ISBN 978-5-8084-1489-1

© Գեղ. կղևկտիվ, 2011 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.



ՆԱԻԿՎՈՒՄ ԷՆ Ս. Օ. Տ. Տ. ԳՆԵԿԻՆ Բ
ԱՄՆԱԼՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՂՎԱՌ-ՀԱՅՐԱԴԵՏԻ
ԾՆԱԴՅԱՆ 60-ԱՄՅԱՌՆ



Մեկնաստիքամբ
Վարդան Կեղոյայի Դուկասյանի



ՄԱՍԿԱՆՍԱԿԱՆ
Կյոտոյիկ
ՕՒՍԱՐԿԱՆ




ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՄԻՏԵ
ԵՎ ԵՏՎՈՐՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մարտի 25, 1977 թվական

Ընկերային է ձևակերպվել արտադրանքի արտադրության
մասին հարցերի և կարգադրությունների կատարման մասին
և այլն, որոնք հարկադրաբար կատարվելու են ըստ
հետևյալ պայմանների: Ընկերային կատարվելու են
արտադրանքի արտադրության մասին հարցերի և
կարգադրությունների կատարման մասին հարցերի
և այլն, որոնք հարկադրաբար կատարվելու են ըստ
հետևյալ պայմանների:

ԱՐԿԱՆԻՄԱՆ ԹՅՈՒՆ

Ստացվել է արտադրանքի արտադրության մասին
հարցերի և կարգադրությունների կատարման մասին
հարցերի և այլն, որոնք հարկադրաբար կատարվելու են
ըստ հետևյալ պայմանների:



Ստացվել է արտադրանքի արտադրության մասին
հարցերի և կարգադրությունների կատարման մասին
հարցերի և այլն, որոնք հարկադրաբար կատարվելու են
ըստ հետևյալ պայմանների:



ԱՄՈՒՍՆԱԿՆՏՆԵՆԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻՎ ԳՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Անուշավան Եպ. Ժամուկյան

Ամուսնություն և ընտանիք հասկացությունները պատմականորեն միշտ էլ միմյանց հետ կապված են եղել: Աուսմասիրությունները ջույց են տալիս, որ դրանք մարդկային հասարակության կազմավորման հենց առաջին աստիճաններից սկսած առցիկ են իրենց յուրահատուկ զարգացման գործընթացը և այդ զարգացումը վերջին հաշվով պայմանավորվել է տընտեսական գործոնով, այնինքն արտադրողական ուժերի ու դրանց համապատասխան սեփականության ձևերի զարգացմամբ¹:

3-րդ դարում Հայաստանի ներքին կյանքում կատարվեցին արմատական փոփոխություններ: Ստրկատիրությունը հետևողականորեն իր գիրքերը գլխում էր պատական արտադրական և դասակարգային հարաբերություններին: Այդ առնչումը լի էր զարգափարական սուր բախումներով: Դարաշրջանի մեծագույն երևույթներից մեկն այն էր, որ հիթանոսական կրոնը փոխարինվում էր քրիստոնեությունը: Պատմությունը հավաստում է, որ առանձնապես սուր էր պայքարը հին և նոր կրոնների միջև: Սուրբ Տրդատ Գ արքայի օրոք 301 թ. քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն:

Այդ հեղաշրջումները խորապես ցնցեցին հասարակության բարոյական և իրավական պատկերացումները, հարկադրեցին վերացնել հիթանոսական օրենսդրությունը, կյանքի կոչել նոր իրավանքներ: Եթև առաջ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը, բացառապես հայոց արքայի, որը միաժամանակ երկրի գլխավոր քրմապետն էր, ու մեծատոհմիկ ավագանու մեծաշնորհն էր, պապ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելով՝ երկրի աշխարհիկ տերերը ոչ միայն պարտավորություն ստանձնեցին պաշտպանել նրա ղեղմանները հիթանոսությունից, այլև պայմաններ ստեղծեցին իրավունքի միանգամայն նոր հյուղի՝ կանոնական իրավունքի, ծագման ու զարգացման համար: Նոր կրոնի և նրա հետ կապված հավատալիքների ընդունումով, հայ ժողովուրդը, սակայն, հեշտությամբ չի հրաժարվում իր հնավանդ հավատալիքներից ու ավանդություններից: Վերջիններս, Հայկական լիոնաշխարհում երկար դարեր իրենց գոյությունը պաշտպանում են և շարունակում են հարստեկն ժո-

¹ Ա. Յովվայան, Գրեկ և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1977, էջ 311:

դժգոյի մեջ, մասնավորապես զեղիկական Հետամուտ խումբի միջավայրում, Հոսանք խառնվելով ու ձուլվելով քրիստոնեական Հավատալիքների ու ավանդութունների Հեռ¹:

Քրիստոնեական եկեղեցիների տիեզերական, տեղական և ազգային ժողովները, ինչպես նաև նրա առաջնորդները սասնձնեցին կանոնական օրենսդրի ֆունկցիան, որոնք դավանական սահմանումներ սկզբնապես չէին նախաշույն ազգային ու պետական սահմանները և պարտադիր էին ողջ քրիստոնեական աշխարհի Հավատացյալների Համար: Կանոնական իրավունքի մեռնուղը Հանդիմանի ու իրախուսից աշխարհիկ իշխանութան կողմից, քանզի այն նպատակ չուներ թափանցելու պետական օրենսդրության սահմանները, յուրացնելու թաղավորի ավանդական իրավունքը, այլ խնդիր էր դնում կանոնակարգելու նոր կրոնի ծխական ու դավանական կարգերը, Հոգևոր Հաստատությունների կազմավորումը, Հավատացյալի վարքի կանոնները: Թեև կանոնական իրավունքը սկզբնական շրջանում փորձեց դուրս չգալ դավանական Հարաբերությունների կարգավորման ուրույնց, այնուհանդերձ առաջին անգամ կանոնական իրավունքի Հաղթանակով Հայաստանում ստեղծվեց օրենսդրական երկիշխանություն: Երբում գործիք իրավադրոները բաժանվեցին աշխարհիկ ու Հոգևոր օրենքների:

Նոր կրոնի առաջնորդներ ձևաք բերածով չբավարարվեցին: Նրանք, ի Հաշիվ աշխարհիկ օրենսդրության, աստիճանաբար ընդարձակեցին կանոնական օրենսդրության ոլորտը, նորմալորեցին ամուսնությունը և ամուսնայությունը, որն էլ իր Հերթին մեծապես ազդում էր Աստվածաշնչից:

Հայաստանում կանոնական իրավունքի զարգացման Համար ստեղծվեցին այլ պայմաններ: Հայտնի է, որ Արշակ Բ-ն, Ար. Ներսես Պարթևի կարգիով կաթողիկոս, նպատակաբար պայմաններ ստեղծեց կանոնական իրավունքի զարգացման Համար: Սակայն ներքին բարեփոխություններով թաղանթ ավելի տարված Ար. Ներսեսը, Հավանաբար, Հաշիվ չտուգել երկրի ազգային ու ներքին պայմանները, ոտնահարեց արքայի ավանդական իրավունքներն օրենսդրության ապարդիցում, այն իրավունքները, որ ուներ արքան մինչ քրիստոնեությունը և՛ արքան արքա, և՛ արքան քրմապետ²: Այս Հոդի վրա, Հավանաբար, չուսով սրվեցին երկրի աշխարհիկ ու Հոգևոր իշխանությունների Հարաբերությունները և իբրև այդ բանի Հեռանակք՝ Արշակ և Պապ չհանդուրժեցին աշխարհիկ օրենքներին Հակասող Ներսեսի կանոնական նորմանությունները, մասնավորապես՝ ամուսնա-

լուծություն և մերձամուսնություն խնդիրներում և վերահաստատեցին, նախկին աշխարհիկ օրենքներ³:

Մերձամուսնություն խնդիրն իր արտացոլում է դտել նաև ուշ շրջանի ժողովրդական ավանդություններում: «Մի կին մեռնելուց առաջ առում է ամուսնուհ: Իմ մեռնելուց Հետո, խնդրում եմ, ամուսնանաս այն կնոջ Հետ, որի դաստակին կհարմարվի իմ ապարանջարը: Մեռնում է կինը, մարդը որ կնոջ բազուկին փորձում է, ապարանջարը չի Հարմարվում: Մի օր աղչիկը ապարանջարն անց է կացնում մեռնու: Ապարանջարը Հարմարվում է նրա մեռքին: Հայրը բռնի ուզում է ամուսնանալ աղջկա Հետ, աղջիկը դիմադրում է, բայց տեսնելով, որ Հնար չկա ազատելու, օգնության է կանչում Սուրբ Սարգսին: Գալիս է ձիավոր Սուրբ Սարգիսը, աղչիկը վազում, ընկնում է նրա գիրքը, սուրբը աղջկան վերցնում է ձիու զամակը, աղչիկը զրգակեց փոխիկը Հանկիվ, ցանում է օդի մեջ: Սուրբ Սարգսի փոթորիկը օգնության է գալիս, փչում է փոխիկը Հոր աչքերի մեջ և փախցնելով աղջկան՝ ազատում է նրան Հոր մեռքից⁴»:

Սակայն մերձամուսնություն և այլ վիճահարույց Հարցերում եկեղեցին շարունակեց իր կանոնական պայքարը, մասնավորապես Շահագույժանի կանոններից Հետևյալները վերահաստատում են Ար. Ներսես Հայրապետի պահանջները: «Ոչ ոք չհամարակի ամուսնանալ քնորդու, եղբորդու կամ Հորաբջրի, կամ ազգականի Հեռ՝ մինչև չորրորդ մուսուղ: Ով Հողորդ կը լինի ապախիս պտակին, պտեղը կոր՛նի կամ Հարանիքը կերթայ եթէ եպիսկոպոս է կամ երէջ, աթոռն է քահանայութիւնից ընկնեն և պաշտաններին Հեռ չխառնուին: Իսկ եթէ ամուսնացածները պիղծ ամուսնությունից դուռան և միմեանցից բաժանուին, թող իրենց ունեցածի կէտը կարտանայներին տան, իրենց կենսքը ապաշխարանքով անց կացնեն, մեռնելիս միայն Հաղորդուին: Պապ օրհնող կաթողիկոսը 500 դրամ, երէցը 200 դրամ տուգանք ադրասանիքն բաժանեն և ապա իրենց պաշտօնի մէջ Հաստատուին: Իսկ եթէ պատկոտըները չեն բաժանուիլ, պատկող պաշտօնեայք քահանայութիւն չանեն: Իսկ եթէ Հակոտակն և ասեն՝ Ի՞նչու, Նկիտական կանոններում ազգայն ամեն պատիւ չէ նշանակուած, նրանք սխալում են այդպէս մտածելով: օրովՀետո ասենք ի նկատ իունէն թէ այդքան չարիք և ոճիրներ մեր աշխարհում պիտի գործուէին: 12. Եթէ որդին՝ Հօր կնոջն անեն, եկեղեցի չմտնի, բոլոր ժողովներից նզովվայ լինի, մինչև որ ապախարի 7 տարի ունկնդիրների Հեռ, 3 տարի ներսի ունկնդիրների Հեռ, 50 դրամ ադրասանիքին, 50 դրամ՝ եկեղեցուն տայ և եթէ փոխուի ու վար-

¹ Ա. Դանալյան, Ավանդապատու, ՉՍՍ Իրատ, Եր., 1969, էջ 4:

² Ա. Խորենացի, Դայլոց ավանդություն, Եր., 1981, էջ 257-259:

³ Ա. Դանկոբյան, Կանոնակիր Դայլոց, Ա Խառոյ, Երևան, 1964 թ., էջ 380:

⁴ Ա. Դանալյան, Ավանդապատու, էջ 365:

քը ուզողուի, Հաղորդուելու իրաւունք ստանայ...Իսկ եթէ Հայրը որդու կհնծ առնի, կամ եղբայրը՝ եղբոր կհնծ, յոյն պատիժը եւ Նզովքը վրան թափուի:

Ոչ որ ջերմ Հարազատի եւ ազգականների կհնծ կհուժեան շունքի, կամ շնուժեան շունքի նրանց հետ. եթէ կհոշ ցանկութեամբ լինի, յոյն պատիժը եւ առգանքը կրի նա եւ բացի գրանից 10 տարի ուրվանոցում ազայ, կէթ ազատ է, ուրկանաց չգնայ, 300 դրամ ուրկանոցին աուգուք վճարի»:

Ատտիճան կամ պորտ Նրամանկում է մի աննի կողմից մյուսի նկատմամբ ունեցած արյունակցական կապ՝ ըստ ծնունդի: Յուրաքանչյուր ծնունդ Համարում է մեկ ատտիճան կամ պորտ՝ Հորից սկսած: Օրինակ, որդին Հոր նկատմամբ մեկ ատտիճան է, իսկ թոռը՝ երկու, քանի որ երկրորդ ծնունդն է: Երկու եղբայր կամ քույր միմյանց նկատմամբ երկու պորտ են, քանի որ երկու ծնունդ են:

Տղամարդն ու կինը առանձին ատտիճան չեն կազմում, քանի որ նրանք մեկ մարմին են: Զավակներն իրենց ծնողներին նկատմամբ մեկ պորտ են, իսկ իրենց նկատմամբ՝ երկու պորտ: Հոր և խորթ մոր կամ խորթ Հոր որդիները Համարում են մեկ պորտ, եւ մեկ մոր որդիներ, և նրանց պորտները Հաշվում են Հարազատ գազակների պորտ:

Այս Հարցի շուրջ պայքարը այնքան աստիճիկ էր, որ Հայոց եկեղեցին 13-րդ դարում կրկին անդրադարձավ այս խնդրին ու սահմանեց, որ պակվ՝ վողները յոթ ատտիճանով կամ պորտով բանձնված լինեն իրարից: Մեր ժամանակների կենցաղի նոր Հակադրութենների ներքո Գեորգ Ե կաթողիկոսը (1922 թ.) արյունակցական ատտիճանը իջեցրեց հինգի: Խնամխանական չորսի և Հոգևոր ազգականութայն ատտիճանները ջնջեց: Պետք է նկատել, որ արյունակցական պորտերի թվի մասին օրենքը մեր եկեղեցում նույնը չի եղել դարերի ընթացքում: Բյրխատեական ստաշին դարերում ազգվտական գասթ մեք, Ինչպես վերը նշեցինք, արմատացած էր մերձավոր ազգականների ամուսնութայնը, որպեսզի դրանով կարողանային ժողովագարս պահպանել իրենց կալվածքները:

Վերոնշյալ խնդրին անդրադարձել է նաև Սբ. Ներսես Շնորհալին (12-րդ դար), որն էլ արդիւց պահը մինչև չորս պորտ:

Հայաստանի ներքին և արտաքին անբարենպաստ պայմանների հետևանքով 4-րդ դարի վերջին քսանհարյուսմ ծայր ատտիճան սրվեցին երկրի աշխարհիկ և Հոգևոր իշխանութայնների Հարաբերութայնները: Երկարատև պատերազմներից Հայտնված Հայաստանը քաղաքական Հոգևոր էր ապրում, թուլացել էր նրա ռազմական Հզորութայնը՝ 387 թ.

¹ Վ. Գալոբյան, Կանոնադիր Դայր, Ա հատր, Երևան, 1964 թ., էջ 380: Տես նաև Ա. Տեր-Միրելյան, ² Ա. Գալոբյան, Ամուսնադատական իրավունքը վաղ պատմական Դայաստանում, Երևան, 1976, էջ 84-86:

այդ բանից օղտվեցին Գարսիաստանն ու Բյուզանդիան, նվաճեցին կաթիլանոս դարձած Հայաստանը, երկիրը բաժանեցին երկու Հզատակ Հայկական թագավորութայնների:

Ինչ Գարսիաստանը և Բյուզանդիան հիմնականում ձևանկալ մնացին նվաճված Հայաստանի Համապատասխան մասերում իրենց քաղաքացիական, ընտանեկան և այլ օրենքները դործադրելուց, այնուհանդերձ Հայաստանի մասնապատճութայնը բաժանում էր աշխարհիկ օրենսդրութայնը, վտանգում նրա զարգացումն ու նորոգումը, դատապարտում նրան մահվան, եթե երկրի նախարարները և կրթականութայնը չմտաճողվեին ազգային օրենսդրութայն փրկութայն ուղինների մասին:

Այդպիսի ուղի դարձավ երկրի նախարարների ու Հոգևորականների միասնութայն ամբողջումը, որը պայմաններ ստեղծեց աշխարհիկ օրենսդրութայն գոյատևման և կանոնական իրավունքի Հնապազ զարգացման Համար:

Գարբերաբար Հրավիրվեցին ազգային-եկեղեցական ժողովներ՝ նախարարների, բարձրատիճան Հոգևորականների ամենակալով մասնակցութայն, ուր բաժանված Հայութայն Համար ընդունվեցին պարտադիր իրավաբանորմ: Առաջին այդպիսի ժողովը թագավորապետի Հայաստանում գումարվեց Շահապետանում՝ 444 թ.: Շնորհիվ ազգային-եկեղեցական այդ ժողովների ու Հոգևոր առաջնորդների կանոնների ամբողջովից Հայ կանոնական իրավունքի ազգային հիմքը, ազգային, որովհետև Հայ կանոնական իրավունքի ձևավորմանը նպաստեցին և մեր ազգային, սովորութային իրավանջները, ու՝ Աստվածաշունչը:

Ավատական Հայաստանում ժամանակակից պատկերացմամբ իրավունքի առանձին ճյուղեր՝ քաղաքացիական, քրեական, ընտանեկան և այլն, գոյութայն չուներին: Կար աշխարհիկ և կանոնական օրենսդրութայն, որի մեջ ամբողջում էին իրավունքի բոլոր ճյուղերը: Մինչըրխատեական օրենսդրութայնը վաճառար կարգավորում էր քաղաքացիական, քրեական, ինչպայն Հարաբերութայնները և այլն, իսկ զարգացող Հայ կանոնական իրավունքը, ի թիվս զուտ ծրուական ու դավանական Հարաբերութայնների, կարգավորեց նաև ամուսնութայնը և ամուսնալուծութայնը:

Գարաջջանի ընտանեկան իրավունքին Հատուկ էին սկզբունքներ, որոնք արտահայտված են նրա Համարյա բոլոր իրավական Հաստատութայններում: Այդ սկզբունքների Համար ճյուրթական նեցուկ էին դասերի

¹ Եզրի թիվ, Պետրոսյան, Դայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Գաղաթալանք, 1990, էջ 36:

և սեռերի սոցիալ-տնտեսական Հարաբերությունները, որոնք կանխորոշում էին նրանց բովանդակությունը, զարգացումը և փոփոխումը¹։

Ամուսնության և ընտանիքի պատմությունը սերտորեն կապված են տնտեսական Հարաբերությունների հետ։

Այդ ժամանակաշրջանում ամուսնության և ընտանեկան կենսացույցի Հիմքում էլ առավել մեծ չափով էր արժևորվում մասնավոր սեփականության գաղափարը։ Արտոնյալ խազվերն պատկանող անձանց ամուսնությունը, իբրև կանոն, կատարվում էր կամ ֆեոդալական մասնավոր սեփականությունը պահպանելու ու մեծացնելու, կամ թե քաղաքական նկատառումներով²։

Կանոնական իրավունքի մշակները, ցանկանալով մեղմել սեռերի հակամարտությունը, նրանց իրավունքների մեջ եղած մեծ տարբերությունը, և ինչ-որ չափով անձնի տղամարդու կամայականությունը ամուսնության և ամուսնալուծության խնդիրներում, մշակեցին ու Հաստատեցին մի շարք կանոնական նորմեր, որոնք թեև անկարող էին փոխել կնոջ իրավական դրությունը Հասարակության մեջ և ընտանիքում, բայց ընդունակ էին որոշ չափով Հարթել ծայրահեղությունները։

Այսպիսով, հետադարձով զարաշխանում Հայոց ընտանեկան իրավունքը կարելի է բնութագրել հետևյալ Հիմնական սկզբունքներով։

ա. Ընտանեկան իրավունքի իրավաբանորեն ազատ հայտարարել շեշտվում էին ամուսնաընտանեկան Հարաբերությունների դասարարգային բնույթը, ընտանեկան իրավունքի կոչումը՝ պաշտպանելու իշխող դասերի առավել իրավունքները՝ շինականներին և ծառայատիրներին մուսուսնա-ընտանեկան Հարաբերություններում։ Եսահայրիվանի կանոնները ներգործության տարրեր միջոցներ էին սահմանում ազտուների և շինականների Համար՝ ընդգծելով նրանց միջև եղած դասային տարբերությունը։ Նույն ձևով էր վարվում. «Աբունք յաղթող թագուորաց»³։ Այստեղ շեշտված էր ամուսնության դասային բնույթը, արգելված էր իշխողների և ստրուկների ամուսնությունը։ Եսահայրիվան ու շահահայրիվողը կարող էին խնամախնայ միայն իրենց նմանի հետ։

բ. Այդ զարաշխանի սոցիալ-իրավական անարդարություններն էր սեռերի անհավասարությունը Հասարակության մեջ և ընտանեկան Հարաբերություններում։ Նշված սկզբունքը մասնավորապես ընդգծված էր ամուսնաընտանեկան իրավաբանորեն, որոնք Հասարակական-տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր սպարդիզներում տղա-

մարդուն շնորհում էին առավել իրավունքներ կնոջ Հանդեպ⁴։ Խոսելով ամուսնական փոխհարաբերությունների մասին, Ամրատ Գուկերզումարը գրում է, որ ամուսինը կնոջ նկատմամբ ունի անսահմանափակ իշխանություն՝ «Այբ գուլս է կնոջն», սակայն է շՀ Հողվանում⁵։ Միևնույն ժամանակ Հողևոր Հայրերը զեկվարվում էին Նոր Կտակարանի առույթներով՝ «Մարդը կնոջ գուլսն է», «Կինը թող վարենա իր մարդուց, Հնազաղ լինի նրան» (Ս. Կրքբ, Թուղթ առ Եփեսացի, Ե 22, 23) և այլն, որոնք ընդգծում էին տղամարդու առավել իրավունքները կնոջ Հանդեպ։

գ. Հաստատում քրիստոնեական կրոնի Հաստատումից և Հաղթանակից Հետո կանոնական իրավունքը նախանձարևոյից դանդից ամուսնացողների դավանանքին՝ սկզբունքի աստիճանի բարձրացնելով դավանակցական ամուսնությունը։ Այսպես վարվելը պատճառարանվում էր քրիստոնեության դեմ Հանդես եկող բազմատեսակ կրոնական ուղղությունների գոյությունը։

դ. Հայ կրոնական իրավունքը կյանքի կոչից մի կարևոր սկզբունք ևս։ Նա ազդարարեց, որ փոխադրած ամուսնական իրավունքները և պարտականությունները ծագում են պատկերացումներ։ Երկրի Հողևոր-ականությունները ծոզվողին մեջ արժատուփոցե այն պատկերացումը, որ առանց եկեղեցական պատկեր չկա ամուսնություն⁶, որը Հայ եկեղեցույթ խորհուրդներին է։ Քրիստոնեական եկեղեցին տղամարդու և կնոջ միությունը Հաստատել է Հասուակ արարողություններով, դասելով խորհուրդների կարգը, որը ողջխոհունության և մաքուր կյանքի, ընտանիքի որբուկության խորհուրդն է։ Գտակը եկեղեցու այն խորհուրդն է, որով Սուրբ Հոգու շնորհը պատկազիր եկեղեցականի կողմից փոխացվում է պատվով զույգին, որոնք եկեղեցական օրենքով իրար են միանում՝ կազմելով մեկ մարմին⁷։ Քրիստոս տղամարդու և կնոջ միությունը Համարել է Աստուծ կողմից Հաստատված և դրա Համար «այլը պետք է թողնի իր Հորն ու մորը և իր կնոջ հետ լինի մեկ մարմին» (Մարկ. 10:7-9)։ Ամուսնությունը պատկեր է կոչվել, քանի որ ամուսնացողների զլխին թող կամ պատկեր է դրվել⁸։ Ըստ այդմ էլ սահմանվել են կանոններ, մասնավորապես Դլխին մ ծոզվողի կանոնը. «15. Գարտ ե պատշան է դաշնոսիկ որք պսակին Հանդերձեալ են քահանայի տանել, եւ ի վերայ նոցա կատարել զկարգ եւ զկանոն ըստ արիւնյաց

¹ Կ. Դովհաննիսյան, ԵՂՎ աշխ., էջ 91-92:
² Կ. Գալստյան, Ամրատ Ապարապետ, Երևան, 1961, էջ 154:
³ Կ. Դովհաննիսյան, ԵՂՎ աշխ., էջ 93-94:
⁴ Կ. Տեր-Միքելյան, Դայաստանյայց սուրբ եկեղեցու քրիստոնեական, Կ. Եղմիածին, 2007 թ., էջ 461:

¹ Կ. Դովհաննիսյան, ԵՂՎ աշխ., էջ 90:
² Կ. Թովմասյան, ԵՂՎ աշխ., էջ 311-312:

քրիստոնեից, եւ անդ ի սրբութեան անդիան պատկել: զի ի միում անդ-
 ւոջ վայել է լինել պատկին եւ որ ընդունի զպատկ: Իսկ եթէ ոչ սք այս-
 ւէս արտոցէ այլ որպէս եւ իցէ իւրով կամակորութեամբ եւ ծուլութե-
 ամբ անարեւոյցէ դուրէնս եւ զպատկ ամուսնութեանն, քահանայն
 լուծցի յիւրմէ պատուոյն, եւ զպատկաւորսն վերստին պարտաւոր է
 պատկել ըստ աւրիստոց քրիստոսից եւ որպէս առաքեալն պատուիրէ՝
 թէ ամենայն մեր ըստ կարգի եւ պարկեւորութեամբ եղիցի»¹:
 Առաքյալների Հանրոզներէ Գրեւորութեանն Հր պատկներէ նշանակու-
 թյունը, ազդեցութեանը ուժեղացնելի՝ անաստութեանն ու ամուսնա-
 լուծութեան դեմ պայքարելու համար, Հովատացյալներից շատերը
 ըստ Հին սովորութեան շարունակուած էին ամուսնանալ սասանց եկեղեցի-
 անս գիտութեան ու օրհնութեան²:

Նոր սկզբունքը կամ կարգը ճնշց Հակակազմութեան Հակակարգ: Բո-
 լոր Կարմբ, ովքեր կանոնական իրավունքի Համաձայն չէին կարող
 պատկել եկեղեցում օրինականացնել, դիմում էին այդ կարգը շրջանցե-
 ւու ուղան: Հարյուրամյակների ընթացքում ժողովուրդը մշակեց ա-
 մուսնութեանն օրինականացնելու ժողովրդական կարգ, որը Հայտնի
 էր թանրի պատկ անուամբ: Այն տարածված էր Հայաստանում շինա-
 կանների ու ծառա-աղայրիների շրջանում:

- 6. Ե դարի գործիչներ Մբ. Եղիշեհ, Մբ. Եղիկը եւ այլք: Հաստատում են,
 որ Ե դարի կեսերին մենամուսնութեանը Հայաստանում Հիմնականում
 Հաղթանակած եւ արժանավորված սկզբունք էր: Այդ են Հովատում
 նաև Հայ կանոնական իրավունքի բազմալի նորմեր, որոնք դատապար-
 տում էին սեռական գանգառութեանները, պոստկոթյունը, շնութեան-
 ներ, մեղավորին դրսեււն էին յորից ամուսնանալու իրավունքից, սե-
 սակ-տեսակ խոչընդոտներ էին Հարուցում ամուսնալուծութեան գործ-
 ընում՝ ի շահ ընտանիքի պահպանման: Այդ ամենը միասին վերցրած
 Հովատում են, որ վաղ պատահան Հայաստանում՝ ամուսնութեան
 տիրապետող մեք մենամուսնութեանն էր, որը Հանրի ուսնահաղթով
 ազատարդիանց կողմից՝ չխանգարելով ֆեոդալներին ունենալու ի-
 թրեցն Հարեւոր եւ Հարեւորը՝ Եվ դարեր շարունակ պայքար է ծավալ-
 վել իրական մենամուսնութեան Հաստատման համար, սահմանվել են
 կանոններ, մասնավորապես Դվինի Ի ժողովում «5. Եւ երկկանայն
 թէկն գրահարացք իցնն եւ պաշտաւենայք ընդ զինուորս կացցն:

¹ Լ. Սելիք Թանգյան, Գայ Նելիեղեայան իրավունքը....., էջ 362-363:
² Լույս տեսում, Եռլի, 1905, էջ 233:
³ Ս. Դովխանցյան, Յճ աշխ., էջ 95-96:
⁴ Ա. Թովմասյան, Յճ աշխ., էջ 151:

վան ուխտագրացութեանն եւ ի պողեցի եւ ի մտից սրբոյ եկեղեցւոյ,
 եւ ոչ միում մասին արժանի մի լիցին: զի չէ վարտ ապաշարարոցաց, ա-
 րանընթացութեան ասնն, պտուղս եւ զուխտս պահանջն ընդ թահա-
 նայս: Եւ յեղպէս եւ տղէտ, մի իշխեսցնն մտից եկեղեցւոյ, զի անիրաւ է:
 Ընան անուսնութեանն ընդ զինուորս կացցնն եւ զհայրենի հող եւ
 զլուր կայցնն: Եւ յարեւելիս Հարկ տացնն եւ զորդիս ի դպրոց տացնն
 զի ուսցին»³: Հին մասնակներում եկեղեցին երկրորդ անգամ ամուս-
 նացողների պատկով չէր օրհնում, այլ՝ ուսով: Եւսակովմանի ժողովի
 յով կանոնի Համաձայն, եթե պատկ օրհնութեանից տառք տղամարդը
 եւ ազնիվը իրար Հետ Հարաբերութեան ունենալին, տպս Կրտսց պատկը
 օրհնում էր, որպես երկակի, այսինքն ուսով, իսկ եթե կույս էին
 մնացած լինում օրինական պատկ օրհնութեանն էին կատարում: Նույն
 ժողովի 3-րդ կանոնում Շրահանում է. «Եթե մինն սուրբ կուսան եւ
 մինն պոսնկեալ, կուսանին իրք կուսանի օրհնելի եւ պոսնկելոցն, որ-
 պես երկակիս, Կուսանից Կուսանի օրհնելի եւ պոսնկելոցն, որ-
 պես իրարմ»⁴:

Հետագա դարերում երկրորդ պատկն էլ սկսեց առաջինի նման օրհնվել
 երկակիցում: Դվինի 5-րդ ժողովի 10-րդ կանոնը այս մասին Հնախյալ
 Հրահանգն ունի. «Իսկ զերկեակնս նույնպէս պարտ է ըստ առաջին
 կարգին միջնորդաւք եւ իտանականաւք Հովանացուցանել յերկրաց
 յաւժարութիւն եւ յեկեղեցւոյն եւ ի թահանայցնն տարհնութենն ըն-
 դուսին զնշան զուգաւորութեան իւրեանց»⁵: Բայց, ընդհանրապես,
 Հայաստանյայց եկեղեցում սովորութեան կար, որ երկրորդ պատկը
 կատարվեր ավելի նվազ Հանդիսավորութեամբ:

Ինչ վերաբերվում է նուսնութեանն, այսպէս ըստ Բարսեղ Հայրապե-
 տի (կանոն 4) այն անմաքրութեան է եկեղեցւո մեջ, սակայն չի են-
 թարկվում Հասարակական դատապարտութեանը:

- 7. Գարաշընանի ընտանեկան իրավունքի մյուս Հիմնական սկզբունքը
 հոր դերը խանութեանն էր զավանների անձի եւ ունեցվածքի նկատ-
 առ: Այդ սկզբունքը խտուրթամբ կիրառվել է տեսնապես իշխող
 մենամուսնիների եւ ազատների շրջանում:
 Հայրն ունեք մեծ իրավունքներ զավանների անձի եւ զույրի նկատ-
 ամամբ: Եւ նեղով տուժալին շահերից, Հայրն իրավունք ունեք տնօրինե-
 լու իր զավանների ազատութեանը՝ պարտավորութեան դեմաց իրքն

¹ Լ. Սելիք Թանգյան, Գայ Նելիեղեայան իրավունքը....., էջ 327:
² Վ. Զախարյան, Կանոնագիրք Գայլու, Ե. Երևան, 1964 թ., էջ 435:
³ Դավ. Բրիտտոյա Գայատան հանրագիտարան, Երևան, 2002 թ., էջ 867:

պատանդ Հանձնելով նրանց: Որդու կհամամբ Հոր այս իրավունքները յուրովի արձանագրվել են «Կանոնագիրք Հայոցի»-ի մի շարք կանոններում: Խարսեթին վերադրված «Կանոնագիրքը» և թիւրապատիկ այստեղ» կանոնախումբը կրճատվել էր մտերմորէն չհնազանդվող գաղափարներին, խորհուրդ էր տալիս ծնողներին, «որ ինչ հասանել լինէինք սացն սիրով» որդիներին, եզո՞վում զամականքին ունեցովածքից զրկող ծնողներին և այլն¹:

Դ դարից սկսած ընտանեկան Հարաբերութունները Հայաստանում նորմալորենին երկու տիպի օրենսդրութամբ՝ աշխարհիկ և կանոնական: Հետևաբար, դարաշրջանի ընտանեկան իրավունքը աշխարհիկ և կանոնական օրենսդրութայն նորմերի Համադրութուն էր, որոնցով սահմանված վարքագիծ կանոնները կարգավորեցին ամուսնաընտանեկան Հարաբերութունները վաղ պատանեկան Հայաստանում: Հետևաբար ամուսնութայն պրոցեսը ուղղկեցվում էր ոչ միայն կենդանական, այլև ժողովրդական ծնեկրով:

«Կանոնագիրք Հայոցի»-ի Հնտադրութունը Հանգեցնում է մի Հետաքրքիր կերպացութայն. թեև Հայաստանի քաղաքական իրադրութունը եւ-Ե ղ դարերում պայմաններ էին ստեղծում կանոնական իրավունքի ներգրծութայն զրոտի ընդարձակման, ընտանեկան Հարաբերութունները՝ ամորդութայն վերցրած, կարգավորելու Համար, սակայն Հոգեկրահաւութունն այդ քայլին չդիմել: Նա Հարազատ մնաց նոր դավանաբեր ղողմաների ամրապնդմանը և Հիմնականում նորմավորեց նշանադրութայն և պատկազրութայն կարգը, ամուսնայլութունը, ամուսնութունն անվավոր ճանաչելը, Համատացյալների ու ամուսններին բարոյական վարքի ինքնադրեւում, որսեք էլին կարգավորել օրենքները, մասնաճիւղները մինչ պատեր նշանավանների կենսակցին արգելելը, պատկազրութայն Համար որդակի օրեր սահմանելը և այլն²: Այսպիսի Դիմին Բ ժողովրդական կանոններից նշարքով է 24-րդ կանոնը, որն արգելում էր մանկահասակներին ամուսնութունը. «Տղայոց մի իշխեցան պակ աւրհնել, եւ մի կարելոց երկոցունց, առանց զմիմա տեսնելոյ. զի այսպիսի անժամ Հարսանեաց գնացին վնասք մահարեք, եւ ժողովրդականք զայսպիսի Հարսանիս մի իշխեցան առնել զի նոցունց իսկ է կրօնսա.՝ Ամուսնութայն այս Հինավուրց սովորոյթը Հայկոսում էր Հայ կենդանու կանոններին, որոնք արգելում էին մանկահասակներին նշանադրութունն ու ամուսնութունը: Եկեղեցին աղաների Համար արքունքի շրջան Համարել է 12 տարեկան Հասակը,

իսկ աղջիկներին Համար՝ 11 տարեկան Հասակը: Տղաների Համար նախընտրելի էր 12-15, իսկ աղջիկներին Համար՝ 11-14 տարեկան Հասակը: Ահա թե ինչու էր կենդանին արգելում անշտաբաններին ամուսնութունը³:

Ինչ վերաբերել է, թե իրականում ինչպիսի էր այդ մանկ արվում, ապա կարելի էր տեսնել, որ ամուսնութայն Հաս-չՀասը որոշող քահանան, որի մտ պահպանվում էր նախարարական մտայնանքը, ամուսնութունները ձևակերպում էին վաղ Հասակում, բայց չափարեական մտայնանքում զբաղւում էին 17-18 տարեկան: Նման «սովորութունները» քահանան անում էր զիտակցարար, քանի որ, ինչպես վերը նշեցինք, կենդանու կանոնով ամուսնութայն թույլտրելի տարբեր աղջկա Համար սահմանված էր 17 տարեկանը:

Համայն ամուսնական չափահասութունը և ընդունակութունը որոշել են արտաքին նշաններով, այսինքն՝ ամուսնացողի ֆիզիկական զարգացմամբ, կազմվածքով, Հասակով և այլն: Ամենուրեք ժողովուրդը աղաներին ամուսնական տարբեր Համարում էր 15-18-ը, աղջիկներինը՝ 11-14-ը:

Ուշարքով է նաև Սբ. Սահակ Գարեթի Հայրապետական կանոնախումբը և Հետաքրքիր է դարձնում կնոսմ երկրի ընդհանուր վիճակը Հասակաւու Համար: Ինչպա ուշարքով է ամուսնութայն աղատ ընտրութայն կամ աղատ սիրո զուգարար տակալին այն ժամանակ է դարձում: Այս կանոնախումբը Հետաքրքիր էր է ներկայացնում նաև պտակի Համար անթույլտրելի օրերի Հոտակ Հիշատակմամբ.

«3. Ոչ է արժան յուսուր շարքթու եւ կամ ճրագայուցի Զատիկ պատկազր առնել, զի ս. առուրբ յարեթեան առաջի կան. յորս պարտ է աղաւթել եւ Հսկել եւ Հողեւանակն կարգաթք միմիթարել օրեմիտես. եւ ոչ մարմնական զեզիտութեամբ զուուրբ ուուրցն խորհուրդ արհամարհեալ եւ ընդ սան Հարկանել, իսկ եթէ որ զառցի զայս արարեալ պտակ ամուսուեր լիցի եւ պտակաղիրքն ընդ պատմովք նիցին մինչեւ ապաշխարեցան. եւ եպիսկոպոսին տեսնեալ որպէկ կամի մարդադիտեցնել ի վերոյ տեսա:

4. Ոչ է արժան յորժամ առ վաղիւն պտակ է ընդունելուց. յերկային ժողովուրդ առնել եւ արքեմուլ եւ զեդիցել, այլ պարկեշտութեամբ եւ աղաւթութեւ արժանի առնել զինքեան պտակին արհունութեան, սպա եթէ որ զտցի զայս արարեալ. քահանայն զուսն ի քայ փախեցնել. եւ որպէս տեսցար յայլում առուր Հրաման տացի զզուուրթեամբ եւ արժանաւոր կարգաթք պտակի եւ Հարորդիլ աբրինաց:

¹ Ա. Դովանդրյան, Եջի աշխ., էջ 99:

² Նույն տեղում, էջ 87-88:

³ Ա. Մելիք Օմեցյան, Նախ կենդանական իրավունքը..., էջ 336:

¹ Բ. Քոչյան, Նայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 143:

² Գ. Կակոբյան, Կանոնագիրք Տայց, հատոր II, Երևան, 1964, էջ 366-367:

5. Չէ արժան ի սուրբ քառասներորդա Ջատկին եւ մինչեւ ի սուրբ Պենտակոստէն Հարանին առնել եւ զպուրջն խորհուրդ թշնամանալ: զի ամենայն սուր կիրակիէ եւ ի նոսա կատարի Աստուածային խորհուրդն¹: Լեւուհարար Պատկի խորհուրդը քահանան պետք է կատարի թուրքարժամ օրերին, այսինքն՝

1. Ծննդյան ութօրեցի, Հունվարի 8-12-ը:
 2. Հունվարի 14-ից մինչև Առաջավորաց Պաշտ Բարեկենդան:
 3. Առաջավորաց Քառոց շաբաթ օրից մինչև Քուն Բարեկենդան:
 4. Նոր կիրակիի երկուշաբթից մինչև Ազգայնապաշտ Բարեկենդան:
 5. Վարդավառի երկուշաբթից մինչև Ար. Աստվածածնի Բարեկենդան:
 6. Ա. Աստվածածնի երեքշաբթից մինչև Խաչվերացի Բարեկենդան:
 7. Խաչվերացի երեքշաբթից մինչև Հինասկի Բարեկենդան:
 8. Հիսուսի երկուշաբթից մինչև Ար. Ծննդյան Բարեկենդան:
- Պատկի համար արգելված օրեր են՝
1. տարվա բոլոր կիրակի օրերը՝ առանց քառասուրբյան,
 2. ամեն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը,
 3. Հինգ տաղավարներ մեակոցի օրերը,
 4. ս. Ծննդյան, Անվանախոսութեան, Տեսանդառաջի, Ավետոյց եւ Համբարձման օրերը,
 5. ամբողջ Մեծ Պաշտոց (քանի որ ապաշխարութեան եւ սգի օրեր են, եւ անպատահ է ամուսնութեան կատարել, ինչպես նաև խրախմանք անել) եւ զատկական առաջին ութ օրերը, այսինքն Քուն Բարեկենդանից մինչև Նոր կիրակիի ներսույալ:
 6. Առաջավորաց, Վարդավառի, Ար. Աստվածածնի, Խաչվերացի, Հինասկաց եւ ս. Ծննդյան շաբաթվաճառց Հինգ օրերը²:

Պատկազրութեան արգելված օրեր վարժարձում են հեղեղեցական օրերի կանոններով, երկիրյան ժամերգութեանց հետո: Եկեղեցական օրը սկսւածու է երկիրյան ժամերգութեանց հետո: Լաշառամայայց եկեղեցուն սովորութեան է եղել թուրքարժամ օրերին պատկի խորհուրդը կատարել կեւսարից առաջ՝ սուրբ Պատարագի մատուցմամբ: Բուն Բարեկենդանից մինչև Նոր կիրակի պատկազրութեան չի արժում, ըստ Գեորգ Է կամօղիկոսի Կոնզակի: Նախագիս այդ ժամանակաշրջանը Բուն Բարեկենդանից մինչև Պենտակոստէն: Հինուները եւ կիրակի օրերը ինչպիս քաջատրում է ներսես Ընթարհային, ներկայացնում են երկնավոր փեսայի եւ եկեղեցի՝ Հարսի Հար-

անիքի օրերը երկնքում, որով Համատացյալները ուրախանում են Հրեշտակների հետ: Առաջ, այդ օրերին եկեղեցին արգելում է ամուսնութեանը, քանի որ երկնքի մեջ երկրավոր ամուսնութեան չի կարգ լինել Համաձայն Տրեզ պատկերի. «Ոչ չար կանախ առնեմ եւ ոչ կանաչք արաց լինի» (Մարկ. 12-25), Հեուհարար անպատահ է. «զամբնեանկան զայս կատարել Հարանին, որ է տխուրք եւ ծնեղական»: Ուրեմն չպետք է երկնավոր Հարանին օրեր շնորհք երկրավորներ վրա էլ տարածել³: Սակայն Հարանիցը Հայոց մեջ զերթն ամենուրեք կատարում էր զայսուային այսատանքներն ու ձման նախապարատութեան ավարտելուց հետո սկսած աշնանից մինչև Բարեկենդանի վերջը՝ ամբարձած անհրաժեշտ միջոցներին լիութեանը Հաշվի առնելով: Այն կայանում էր սեպտեմբերի վերջերից մինչև Մեծ Պարս: Որոշ վայրերում Հարանիքների շրջան ավարտում էր Տյաներնդառաջի տոնական արարողութունների անցկացումով, թիպտ եկեղեցին այդպիսի արգելք չէր սահմանել⁴:

Քուն Հարանիքն անում էին ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին (երեք օր), թիպտ ըստ եկեղեցական կանոնների այդ արգելված էր:

Սպայիսով կանոնական իրավունքը կարգավորեց ամուսնաքտանեկան Հարաբերութեանների մի ժամը միայն, առավելագույն այն ժամը, որը Հարազատ էր Սուրբ Գրքի եւ առաքյալների զոգովաններին: Նա Համարյա չներամպորեց ամուսնների, ծնողների ու զավակների, ընտանիքի մյուս անդամների ինչքային Հարաբերութեանները, ինսամակալութեանը, Հոգաբարձութեանը եւ որդեկրթութեանը, որոնք շարունակեցին կարգավորել այնխորհիլ օրենսդրութեան ծրարներով, սովորութային իրավաւճարով եւ սովորյալի համաձայն: Մեր ավանդազրույցներում արտացոլված են նաև սեր կանոնական եւ աշխարհիկ օրենքների հիմնադրույթները, այն է՝ այդ ավանդազրույցներում խոսվում է րոնի ամուսնութեան (Ասում են թե Տյուսերի անունով մի աղջկա Քաջարանից Հարս են տարել չուգած դյուզը, չուգած մարդու Համար: Կես ձամփն Տյուսերին բրեն նետակ է Տյուսեական գոտի փրփուրների մեջ եւ... Հարչքով դարձել է քարե արձան)⁵, հոգևորականների պատկի (Մի չար վարդպետ ուզում է տիրանալ գեղեցիկ Ծուլանին: Սա փախւում է զեպի ժայռից: Երբ քիչ է մնում որ վարդպետը Հասնի Ծուլանին, վերջինս օգնութեան է կանչում Աստուծուն: Ժայռը իսկույն ծակվում է, եւ աղբիկը իսկույն ժանում է նրա մեջ: Իսկ վարդպետն էլ Աստուծու Հար-

¹ Ե. Մելիք Թանգյան, Պալ եկեղեցական իրավագրք, էջ 358:
² Գ. Պաթրյան, Զվլան աշխատություն, էջ 92:

³ Ա. Պոլսեպյան, Պարտադիր հայրը, Երևան, 2009 թ., էջ 308:
⁴ Կ. Նախապետյան, Աղծիրախայերի ամուսնախարանվան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2008 թ., էջ 21:
⁵ Կ. Պաթրյանյան, Ավանդապատում, էջ 54:

մանով թաղի է դառնում և բնիկում չուրե՞նք¹), գաղտնի ամուսնորթյան (Երիտասարդն ու ազլիկը, տառն ծնողների կամքի, զնացել են պավովելու: Հակասակ բնույթով ամուսնորթյան, երանք եկեղեցուց դուրս են եկել աբեմազեց առաջ, որի համար և աստված պատել ու քար է դարձրել երանց: Գ. կրկնամուսնորթյան (Երիտասարդ քահանայի ուրուճ վանճանեցու կին և աշխնչ յայտնեցով նա յընկալուլ գրերորդ ամուսնութիւն, կաթուղիական ամուսնոյ էրմիզնի եղ ի վերայ նորա առօրինակ ապշախարհութիւն, նախ շինել Գնկիզցի մի ի սրբատուր քարանց, և այնպէս բնիկանուլ գրքաման երկրորդ ամուսնութիւն: Աշխատել նորա ոչ սակաւ ամուսնան է կատար ցայտ փոքրիկ տանար: Տեսուլ կաթուղիական գրեկարտուն զանխոնը աշխատան նորին, յաւել և զայս, թէ անցն շուրջ զզովս պարեալ քարեա, յայնժամ ուրիւ Հասանիլ բազմանայ քոց: Յանձն տանել և զայն կատարեաց, թէպէտ և եհառ յամբող զործոյն, այլ երկարատե միջոց զործառուութիւնցն խոնարհեցոյց զհասակ նորա յալիս ծերութիւն, և զործն բազմամտիլ թափեաց ի նմանէ զինչս և զհարատութիւն: Այլա ի հրամայել կաթուղիական մասնել նոս երկրորդ ամուսնութիւն, ետ հասեցա քահանայն ի հրամանէ անտի և թողալ զառաջին դիտաւորութիւն իւր՝ եկաց բարեկրօնութեամբ ցմահ իւր²): երևոյթներն մասին:

Աշխարհիկ օրենսդրութեանը Հանգամանորեն կարգավորող ամուսնութեան փորձերն (տուսյրի, օմիտ-դուսչի (քամիքի) իրավունքը և այլն:

Աշխարհիկ-կանոնական ընտանեկան իրավունքի նորմերը պարտադիր էին երկրի բոլոր սոցիալական զանախի համար:

Հասանեկան Հարսերութիւնները կարգավորող աշխարհիկ և կոնքանական նորմերը էին Հակասուս միջնայն: Դարաշրջանի այս երկու իրավական Հուշարձանները լրացնում էին միմյանց, կազմում անբաժանելի ամբողջութիւն: Բավական է անտեսել զբանցից մեկը՝ զարաշրջանի ընտանեկան իրավունքը վերածվում է կիսավարտ ճյուղի: Հայոց կանոնադիրքը և Աւերնք յայնպիսի թագաւորաց՝ը փոխադարձաբար լրացնում են միմյանց: Դրանք միտան վերջա՞մ արդիական պատկերացում են տալիս, թե ինչպիս, ինչպիսի իրավական մեքերդ ու միջոցներով էին կարգավորվում ամուսնաբառանեկան Հարսերութիւնները ավատական Հայաստանում³:

¹ Ա. Դանալյան, Ավանդապատմ. էջ 55.
² Լույս տեղում. էջ 68:
³ Լույս տեղում. էջ 224:
⁴ Ա. Չոլիանճիյան, Գլխ աշխ. էջ 89-90:

ՀՈԳԵԳԱՌՈՍԻ ԹԵՄԵՅՈՎ ՍԱՆԿԵԿՆԵՐԵՐԻ ԸՆԸ ՄՈՏԻՎԸ

Լ. Սյունյան, Կ. Տոլիանճիյան

13-րդ դ. առաջին քառորդում Հայ մանրանկարչության կիրիկյան դպրոցի ներկայացուցիչների «Հոգեգալուստ» վերնագրված նկարչական ստեղծագործությունների մեջ առավել զարդա, իսկ Հետո նաև այլ դարձեցիչների ներկայացուցիչները արվեստում, զարդանում է մի յուրերևակ մոտիվ, որը մասնագետները սովորաբարում են կապել բրիտանական դիցաբանության և Հատկապես միջնադարյան նկարչության ստեղծագործական կանոնի հետ: Դա շնագալուստ մարդու կերպարն է: Իր բացառիկության և յուրահայտ յուր նկարի մեջ ստեղծագործական յուրահատուկ զրուերման շնորհիվ այն զբաղվել է Հայ և օտարազգի մի շարք մասնագետների ուշադրությունը, որոնք փորձել են բացատրել երևույթը երեք Հիմնական Հարցադրումներով.

1. «Դ է շնագալուստը,
2. ինչպե՞ս և ինչու՞ է այս նոր մոտիվը ի Հայտ գալիս զարդացած միջնադարում,
3. ինչու՞ է այդ մոտիվն ամբողջովում Հոգեգալուստյան թեմայով Հայկական մանրանկարչության մեջ¹:

Պետք է նշել, որ մի շարք դիտանկաններ (Ս. Տեր-Ներսիսյան, Տ. Գույումճյան, Թ. Յ. Միջնայոց, Ա. Սանճյան, Ջ. Գ. Ուայթ և ուրիշներ) ճշտել են, որ այդ մոտիվն ի Հայտ է գալիս նաև սիրիական երեք մանրանկարչական նմուշների մեջ, որոնք բոլորն էլ ստեղծված են միևնույն 13-րդ դարում, սակայն Հայկական ամենահին նմուշը (Պոլսի Գուլամթաղիների Հայկական եկեղեցում պահվող ավետարանից, որի մասին կիսովի ստորեկ) նախորդում է սիրիականներին, և մոտիվի ստեղծությունը սիրիական արվեստում 13-րդ դարից Հետո ընդհատվում է: Պետք է նշել, որ Հայ մանրանկարչության մեջ այդ մոտիվը ոչ միայն պահպանվում է լրամշակվում-զարգանում է, այլև տարածվում է կիրիկիայից (՝) դեպի Հայաստանի այլ տարածքներ, մասնավորապես, դրան տուրք են տվել Վասպուրականի դպրոցի մանրանկարիչները:

¹ Դարադրույմների այս դասակարգումը պատկանում է Ֆրիզոնի համալսարանի պրոֆ. Տիգրան Գույումճյանին, D. Kouymjian, Atti del Prime Simposia Internazionale di Arte Armeno (Bergamo, 28-3 giugno 1975), San-Lazzaro-Venice, 1978, p. 403-407:

Հոգեկալուստ թեմայով և շնորհուրի կերպար պարուհեակոզ մանրանկարները՝ սյուժեին, կառուցվածքը, գույները, պատկերազարդին մոտիվները

1. Անխարսան, XIII դ. կես: Նկ. 1.

Ուղղանկյուն շրջանակված տարածության մեջ կամարածե նստած են 12 առաքյալները: Նրանց վերևում, կենտրոնում, կապույտ փոքր կամար է, որից իջնում են 12 սպիտակ ճառագայթներ և սպիտակ աղափնի: Առաքյալները խոստ կանոնավոր չեն նստած, աջկողմյան վերջին առաքյալի լուսապսակը նույնիսկ դուրս է եկել շրջանակի վրա: Առաքյալները տարբեր տարիքի են. ալեոսերնից իջնում են զեպի միջին Հաստը, Հեոտ զեպի երիտասարդները՝ ակնհայտորեն կրում են նաև տոմարական խորհրդապաշտոնները: Առաքյալների նստած շրջանակը բաժանված է 12 մասերի՝ առաքյալների քանակին Համապատասխան: Այն պատկերված է կանաչ և կապույտ երկու շենքերի առջև, որոնցից կապույտի ներքին մասում, կամարների տակ օտնդուզք է պատկերված: Առաքյալները մեկնած աջ ձեռքով ցույց են տալիս կնարի կենտրոնից մինչև ներքև իջնող կամար-խորանը: Ոտրանի մեջ, աջ կողմում պատկերված է երկերեսանի մի էակ՝ ձախ երեսը շուռ, աջը՝ մարդ, կանաչ զգեստով, կարմիր թիկնոցով ու կամարի երկարաձևից կոշիկներով, ընդ որում մարմնի ուղղությունում ունի ձախկողմյան թևերում (զեպի շան զեմբը): Նա պատկերված է 7 Հոգուց կազմված խմբի Հեոտ, որոնցից մի քանիսը չալմաներով են, իսկ երկուսը՝ կոնաձե բարձր կարմիր գլխարկներով (բաղ-դեսայ-աստղազաննեթ): Առաջին պլանում, ընդհանուր պատկերից թեթևակի առանձնացված են Հնճից շնակերպ էակը և վարդադույն զգեստով, սուրբալի չալմայով, կարմիր երկարաձևից կոշիկներով մի երիտասարդ, որը ձեռքերը մեկնել է զեպի շնակերպ էակը, ընդ որում աջ ձեռքի արձուճակը ներքին կամարի շրջանակի վրա է:

II. Սպարիտաի անխարսան, 1267-1268, ծաղկով Թ. Ոսպինճ:

Նկ. 2. Ուղղանկյուն շրջանակված տարածության մեջ կամարածե նստած են 12 առաքյալները: Նրանց վերևում, կենտրոնում կապույտ փոքր կամար է, որից իջնում են 12 կապույտ, ծալերը կարմիր ճառագայթներ, որ-



Նկ. 1

րոնք մեջտեղից Հասակ բաժանված են 6-ական ճառագայթներ: Մեջտեղից, առաքյալների սկզբառակի վրա Հաստորեն սյուն է պատկերված, որը նույնպես առաքյալների բաժանում է 6-ական խմբերի: Առաքյալները խոստ կանոնավոր չեն նստած, երկու կողմից վերջին առաքյալները լուսապսակները դուրս են եկել շրջանակի վրա: Առաքյալները տարբեր տարիքի են. ալեոսերնից իջնում է զեպի միջին Հասակը, Հեոտ զեպի երիտասարդները: Առաքյալների նստած շրջանակը բաժանված է մասերի, Համապատասխան առաքյալների քանակի: Առաքյալներով սկզբառակը պատկերված է երկու շենքերի առջև: Առաքյալները աջ ձեռքերով ցույց են տալիս մեջտեղից ցած իջնող կամար-խորանը: Ոտրանի առաջին պլանում պատկերված են շնապույտ էակն ու թագավորը, երանցից Հեոտ՝ եւ 4 անձ. 2



Նկ. 2

կին, 2 աղամարդ, աղամարդկանցից մեկի գլխին կոնաձե կարմիր գլխարկ է (բաղդեսայ-աստղազեթ): Ծնադուրի կերպարը աջ կողմում է, Հազին կարնաչ զգեստ է, զեպին պարզուրու, կարմիր թիկնոց, ձախ ձեռքեր ունի կարմիր ձեռնափայտ (տեղ): Նրանք պատկերված են կանաչ մարդադեմանին, կապույտ երկնքի Փոռին, որի վրա՝ Հայկական մանրանկարչությանում Հազվադեպ Հանդիպող սպիտակ գույնով արված դիր է, որի առաջին բառն է, Հազվաճարար, «պարթև»:

Թագավորը Հազել է կապույտ զգեստ՝ եղբրված զեպինով, ներքև կողմից՝ կարմիր թիկնոց, գլխին սակե գլխարկանման թագ: Նա աջ ձեռքը մեկնել է զեպի շնակերպ էակը, որն էլ ձախ ձեռքը հրամայած ուղղել է թագավորի կողմը՝ նա ինչ-որ բան է ստան, քանի որ բերանը բաց է:

III. Բերկրի, Անխարսան, XV դ., ծաղկով Պնտուր, Սկրտիչ քանանայի որդի: Նկ. 3. Ուղղանկյուն շրջանակի վերևից, կենտրոնում կամար է, որից բաժանված 6-ական ճառագայթներ են իջնում, իսկ մեջտեղից՝ աղափնի: Պատվանդանի վերևի աջ կողմից լուսապսակով մի գլուխ է ընկնում (Ս. Կարապետի): Պատվանդանն ու խորանը իրար Հեա խաչ են կազմում: Պատվանդան-խորանի երկու կողմից աստիճանական կարգով պատկերված

1. Դավթական մանրանկարչություն, «Հայաստանի հրատ», Եր., 1969:
2. В. Казарин, С. Манукян, "Армянская рукописная книга VI-XIV веков", Москва, 1991.

1. Ա. Գևորգյան «Չալ մանրանկարիչներ: Մատենագիտություն IX-XIX դդ.», Գաղիոթ, 1998, էջ 617:
Քանի որ գրքում գտնվող պատկերը մ. ու սպիտակ է, և բնագործին ծանոթ չեմք, գույնների մասին չեմք կարող խոսել:

են 6-ական առաքյալներ, որոնցից վերջինները դուրս են եկել շրջանակից: Առաքյալների պատկերումը ենթադրում է տարեշրջան:

Նկարի կենտրոնում, ներքևում կամար-խորան է, մեջը՝ շեղալուս մի էակ, խորանի վրա պատվանդան է, վրան սփռոց, սփռոցին՝ դավաթ, որի մեջ իջնում է աղավաթին: Ամենաներքևում, բաժանված երկու մասի, ամեն մասը առաքյալների խմբերից մեկի տակ է՝ գրված է. «Առաքեալքն Քրիստոսի ի վերնատուն»:



Նկ. 3

IV. Եղբարս, Ավետարան, XV դ., ծաղկող Յովսեփ: Նկ. 4 Ուղղանկյուն շրջանակի վերևում իբրև զուգորդվող կամարներ են, որոնց միջևեղից աղավաթի է իջնում: Հորիզոնական և ուղղահայաց առանցքներով առաքյալները բաժանվում են չորս խմբի՝ յուրաքանչյուրում երեքական անձ, Համապատասխան տարվա եղանակներին: Կամար-խորանի մեջ ձախ կողմից շեանկեր էակն է. իսկ աջից՝ Թաղավորը: Թաղավորը ձեռքերն ուղղել է դեպի շեանկերը, իսկ վերջինս աջ ձեռքի ցուցամատը պարզած՝ ինչ-որ բան է ասում:

V. Եղբարս, Ավետարան, XV դ., ծաղկող Երեսն արճաղ: Նկ. 5. Ուղղանկյուն շրջանակի վերեջից, ամպաման զանգվածից իջնում է աղավաթին: Վերևի 6 առաքյալները կիսաշրջան են կազմել, զեպի իբրև ուղղելով աջ ձեռքերը: Նկարի ներքևում, ամեն կողմից 3-ական առաքյալների միջև, բնդ որում ամեն կողմից մեկական առաքյալ ասես ձեկներով պահում են կամար-խորանը:

¹ Լույսն տեղում, էջ 568:
² Լույսն տեղում, էջ 585:



Նկ. 4

Որոշանի մեջ պատկերված է մի էակ, որի դեմքը շան կամ կապիկի մուսթ է հիշեցնում. բնդ որում աչքը պատկերված է երկպատկան կանոնով՝ կիսադիմի զեմբին՝ զիմահայաց աչք: Նկարը ամբողջությամբ շատ արտախի ոճ ունի:

VI. Սոխ, Ավետարան, XVII դ., ծաղկող Հաղոթ քանանյա:

Ուղղանկյուն շրջանակ, որն արված է չյուսվածքով, վերևի մասը զուգորդվող կամարներ են: Նկարը Հատուկորեն բաժանված է երկու մասի ուղղահայաց չյուսված գծով: Վերևի մասում ամեն կողմից 6-ական առաքյալների (աշխուղման կա նաև երիտասարդի դուստր, որը մի փոքր ասանձանում է, դառնալով 13-հորբղը, զույցն նարից Ս. Կարապետ) միջև պատկերված է դավաթման սփռոցածն կ պատվանդան, որի վրա կանգնած է լուսապակով աղավաթնակ թոչուն (Փյունիկ, Հավալասա՞ն):

Նկարի ներքևի Հատվածում գտնվում է կամար-խորանը, որի մեջ ձախ



Նկ. 5



Նկ. 6

¹ Լույսն տեղում, էջ 668:

կողմից շեղեցրել էակն է, ավելի թափափոք, մեղմեցրած մի պատանի: Ծնակերպ էակը, բարձրացրած աջ ձեռքի ցուցամատը, կարծես, ինչ-որ բան է առում մեղմեցրել երեսասարգին: Խորանի ամեն կողմից վերևում բռտակուսիներ են, ներքևում՝ արևխաչեր:

VII. Ավետարան, 1223, Սրամբուլ, Գարաթյանների եկեղեցի: Վերինից իջնում են 12 ճառագայթներ, վերևից, կենտրոնում, սրտոցով պատվանդան է: Առաքյալները կամարան են դասավորված, աջ ձեռքերը ուղղել են դեպի ներքևում գտնվող կամար-խորանը, որի մեջ մի էակ է, որը կարծես պարուն է և շուն կամ կապիկ է Հիշեցնում (տե՛ս V նկարազույթյունը):

VIII. Ավետարան, 1262, ծաղկոլ Թ, Ռոսպե, Բայրիմոս, Walter Art Gallery: Նկ. 7. Կամարան գմբեթավոր խորան, որի երկու կողմերում մեկական սիրամարդ ու ծառ է պատկերված: Գմբեթի ստվից կամբի սրտոցով սպիտակ պատվանդան է, որից 12 սպիտակ ճառագայթներ են իջնում: Առաքյալները կամարան են դասավորված, վերջինները դուրս են գալիս շրջանակից՝ ստեղծելով տարածություն: Ավելի ներքև կամար-խորանն է, որի երկու կողմը 7-ական առախաններով սանդղակներ են (տե՛ս I նկարազույթյունը): Խորանի մեջ մի խուճը մարդիկ են, որոնցից առանձնառեն են ձայնից ա՛յ՛ մուգ զգեստով շեղեցրել էակը, այնու դերուհին և լուսավարակով թափափոք: IX. Քերան բազոտի Ավետարան, 1272, Երուսաղեմ, Հայոց պատրիարքարան:Ուղղանկյուն շրջանակի մեղմեցրել կամարին 12 ճառագայթներ են իջնում: Առաքյալները դասավորված են կամարան:՝ կազմելով տարեբընան:



Նկ. 7



Նկ. 8

Ներքևի կամար-խորանում ձայնից շեղեցրել էակ է, որը պարզած ձեռքերով քարոզում է աջ կողմի մի խուճը մարդկանց:

X. Ավետարան, ստեղծման տարեթիվն ու հեղինակը անհայտ են, պահվում է Մատենադարանում: Նկ. 8. Ուղղանկյուն շրջանակի մեղմեցրել կամարին, երկվյառ կարմրազդեղնով, 12 սպիտակ ճառագայթներ են իջնում, վրան կարմիր լեզուներ: Կամարի մեղմեցրած մուգ է, Հակադիր կամար է իջնում, որի վերևի մասում սպիտակավուն խաչ է, ներքևում՝ կարմիր սրտոցով պատվանդան:

Ներքևում կամար-խորան է, որի մեջ՝ կանաչ մարգագեանին, կպուլույ, ամպազարդ երկնքի փունին երկու խմբի բաժանված մարդիկ են, որոնցից ձախ խմբում առանձնառեն է կամբի թիկնոցով թափափոք, իսկ աջում՝ կամբի զգեստով, մուգ շեղեցրել էակը, որը կանգնած է կանաչ զգեստով երիտասարդի կողքին: Ծնակերպն ու կանաչ զգեստով ձեռքերը պարզած՝ քարոզում են:

Ընտրված 10 նմուշները տիպական են, թեև Հոգեգալուսյան թեմայով ոչ բոլոր մանրանկարներն են պարունակում շեղեցրել էակին:

Այսպիսով, նկարազրված նմուշների մեջ կարող ենք դուրս բերել մի քանի բնորոշ գծեր.

1. Նկարները եռաչորս են՝ վերին, միջին և ստորին,
2. վերին կամարից 12 ճառագայթ է իջնում, 3. առաքյալները՝ 6-ական կամ 3-ական խմբերով շրջան, կամար կամ երկկողմանի կոմպոզիցիոն են կազմում, 4. առաքյալները աջ ձեռքերով ցույց են տալիս ներքևի խորանը, 5. խորանում, որը և նկարի ստորին շերտն է, շեղալուխ խոսող կերպարն է, 6. լուծուճը կանաչ և կարմիր գույներով է (մեզ Հասանելի գույնավոր նկարներում):

Փոփոխական մոտիվներ: 7. Իջնող կամ սեղանի վրա կանգնած ազգվեի կամ փուլեկի թուշուն, 8. ստեղծող, պատվանդանի Հնու խաչի առկայություն, ետին պատնեմ՝ շենքեր, 9. ներքևի խորանում՝ թափափոք, 10. երեք Հոգի՝ շեղեցրել, թափափոք, երիտասարդ, 11. շեղեցրել մեղմեցրել է, 12. շեղեցրել ձեռքին սեղ ունի, 13. կամբի կոնան զլխարկներով տղամարդիկ՝ քաղցեցից-ստեղագեաներ (°), 14. Հովհաննես Կարապետի (°) գլուխ:

Ծնակերպի տեսակ մեկնարանությունը
Հոգեգալուսյան մոտիվը պատկերազարդումն է Գործը ստեղծելը 2. 1-9, այն Հատվածի, որում նկարազրվում է Սուրբ Հոգուի գեպի երկիր իջնելը, առաքյալներին լույսի շողերի միջոցով բազում լեզուներով խոսելու ընդունակությունը Հարգողը: Բոլոր գիտնականները, որոնք այս կամ այն

¹ Քաղված է՝ D. Kouymjian, Եզվ. աշխ. Սեզ հայտնի պատճենը սև և սպիտակ է:
² Քաղված է՝ D. Kouymjian, Եզվ. աշխ.
³ Քաղված է՝ D. Kouymjian, Եզվ. աշխ. Սեզ հայտնի պատճենը սև և սպիտակ է:

¹ Քաղված է՝ D. Kouymjian, Եզվ. աշխ.

առիթմով անշնչվել են Հոգեգալուստի մանրակերպերի հետ, նշում են, որ պատկերաբարժությունը զարգացած է մեկ զոմով կանգնած առաքյալներից դեպի եռաշար կամպոզիցիա, որի ստորին «Հարկում» պատկերված են «Հն-բարեան ժողովուրդները», որոնց պետք է դարձի բերեն առաքյալները: Այսուև, հիմնականում շնագլուխը ինչ-որ մի (Վարյի) ժողովրդի ներկայացուցիչ է, որին պետք է դարձի բերին Հիտուսի առաքյալները, քանի որ Հին աշխարհում գոյություն ունեն օտարազգիներին որպես կենդանիների պատկերելու միտումը¹:

Տ. Գույումյանի կարծիքով, շան կերպարը կարող էր ներշնչված լինել.

1. որևէ այլ ժողովրդի շնագլուխ պատկերացնելու երևույթով, որի դերը պայամանք կարող էր դառնալ 13-րդ դ. արված Միքայել Ասորու Հայերեն Քարգմանութունը, քանի որ տեքստում առկա է պատում Անդրեսու առաքյալի՝ շնագլուխներին բարդելու դրվագը.

2. 13-րդ դ. Հայ արվեստում Հայտնվում է շնագլուխ կերպարը, ներշնչված մոնղոլների հետ ծանոթութունից, որոնց կիրակոս Գանձակեցին նմանեցնում է շնագլուխ հակերթի.

3. Տրդատ արքայի խոչընդոտվածությունը²:

Ս. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ առաքյալների պատկերաբարժությունն այս նկարներում Համապատասխանում է Գրիգոր Նազիանզիացու կանոնին, ըստ որի երանք պետք է դաստիարակ լինեն կրառչունական³: Ասորին Հատվածի «ցիդերի ե լեզուների» միջև շնակերպի Հայտնվելը կապում է դպտիական և եթովպական օգնությունի մեջ պահպանված Անդրեսու և Բարթողոմեոս առաքյալների վարքի այն մոտիվի հետ, որում Տիրոջ ուղարկված շնագլուխը պաշտպանում է առաքյալներին պարթևները: առաքյալներին նշանում են առյուծների գուրի մեջ, և շնակերպը զգրվում է առյուծների առաջ և խողաղեցնում երանց: Նշում է նաև, որ մինևունյն մոտիվը ավելի ուշ փոխառվել է Ս. Մերկուրիուսի Նահատակության պատմության մեջ⁴: Թեև երա վարդավառ մտնածամայն անահճնուն է վերը նկարագրված մանրանկարներից անձվագի երեքում ամպ «Պարթևք, մարք և ելիմացիք» արձանագրությանը, Տեր-Ներսեսյանը շարունակում է սպասելուցնի կուսականի շնակերպ-օտարազգիի վերաբերյալ, ամբողջորդելով Տ. Գույումյանի վերը շարադրած տեսակետը: Միքայել Ասորու վրայու-

թյան Համաձայն, այն երկրում, ուր քարոզում էր Անդրեսա առաքյալը, շնագլուխ մեկը Հարձակվել է սպանել էր երկու կնոջ, իսկ կիրակոս Գանձակեցու մոտ մի դրվագ կա, որում մոնղոլ տղամարդկաց պատմիչը նմանեցնում է շներին: Հավանաբար, ինքն էլ մինչև վերջ չՀամոզվելով, տարվուսում է, որ «ցեղերի և լեզուների» մասում Հայտնվում են նաև լուսպատասխանով կերպարներ: ԱնՀասկանալի (ավելի ուշ՝ վարկածին չՀասկանալի) մոտիվը փորձում է վերաբերել ոչ միջամտութուններին և արտանկարման ղեֆեկտներին, նման առաքյալներից մեկին ավերորդ ստեղծվ, մյուսին՝ միայն կիսով չափ պատկերելուն և այլն⁵:

Պրակտիկորեն մինևունյն կարծիքն են արտահայտում Թ. Յ. Մեթյուզը և Ա. Վ. Սանթյանը, նշելով, որ Հոգեգալուստյան մանրանկարների ստորին Հատվածում անփոփոխ պատկերվում «օտար ժողովուրդները», և շնագլուխ մարդը Հեթանոս այլազգիի արկորիկ կերպար է⁶: Ստացվում է որոշակի Հայաստություն. մի դեպքում շնագլուխը Հեթանոս-վարյի ժողովրդի ներկայացուցիչ է, իսկ մյուս դեպքում՝ առաքյալների օգնականը:

Արդյաք կարելի է գտառահարք որ, որ 13 դ. կրիկիայում դեռևս կային պատկերացումներ շնագլուխ օտարազգիների մասին, ինչպես դա, Հավանաբար, կել է վաղ միջնադարյան եվրոպայում: Մասնավորապես, անՀամոզիչ է Հեռում մասնագետների պնդումը, որ Հայերն այդ ժամանակ կարող էին շնագլուխներ տեսնել մոնղոլների մեջ, մասնավոր կրիկիայում, որն ունեցել է բավական սերտ բարեկամական Հարաբերութուններ այդ ժողովրդի հետ, իսկ նեթում Քաղաքագրն անգամ մոնղոլ կին է ունեցել: Մասնավորապես, ինչպես Հայտնի է, որևէ առաքյալ երբևէ մոնղոլների մեջ չի քարոզել, և մոտիվը անհնչություն չունի ստամբանշարյան թեմաների հետ: Վերջուպես, մանրանկարների Համապատասխան Հատվածում Հաճախ ուղղակի նշվում են այդ օտար ազգիներ՝ պարթևք, մարք և ելիմացիք, հերտ այնպես, ինչպես Աստվածաշնչում է (Գործք, 2:9):

Կարծիքներ կան նաև եթովպացիներին շնակերպ պատկերացնելու վերաբերյալ (D. J. White)՝ Անդրեսա առաքյալի եթովպիայում բառարկվելու և շնակերպի միջոցով փրկվելու եթովպիայից իսկ գտնված պարականոն տեքստի հիման վրա: Միջնադարյան Հայերի նման ագիտության մասին կարծիքներ Հերթելու Համար բավական է ընթերցել «Աշխարհացույցը», որում մանրամասնորեն նկարագրվում են և եթովպիան, և նույնիսկ ավելի Հարավ ընկած երկրները, որոնց բնակիչները, ըստ «Աշխարհացույցի»

¹ Այս մասին առավել մանրամասն. D. G. White, Myths of the Dog-man, Chicago, Chicago Press, 1991, p. 22 and cont.
² D. Kouymjian, նշվ աշխ., էջ 405-406:
³ S. Der Nersessian, Miniature Paunting in the Armenian Kingdom of Cilicia, Dumbarton Oaks, Harvard University, Washington, D. C., 1993, p. 41.
⁴ Լույս տնդում, էջ 41.

⁵ Լույս տնդում, էջ 41-42:
⁶ Th. F. Mathews, A. K. Sanjian, Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel, Dumbarton Oaks, Washington, D. C., 1991, p. 157-158.

անամորթ են, բայց ոչ՝ չնայելով՝: Հատկապես բուն եթովպացիները ոչ մի-
այն վաղեմի ժամանակներից Հրաշալի Ծանոթ էին Հայերին (այդ թվում՝
մատենագիրներին և մանրանկարիչներին որպես կրթված դասի), այն
դեպքում էին Հայերի Հնո մշական սերտ կապի մեջ: Բավական է նշել զե-
ղովում և Հին Հայերի Հնո մշական սերտ կապի մեջ: Հիշատակությունները
Լզ, այժմ վերացած, եթովպական դրաման լեզվի Հիշատակությունները
Վրդգոր Մազիարտոսի մոտ՝ Նրա ժամանակներին է, Հավանաբար, վերա-
բերում գեղեցիկ-Հայերին բառաբանը, ինչպես նաև Աքառուժի Հայ բարձրա-
տիճան ակնզավականների, մասնավորապես՝ Հայ Մաաթեոսի, մասին Հիշա-
տակությունները¹:

էլ ավելի զավեշտական կլիներ ենթադրել, որ չնակերպ «օտարականը»
ներկայացնում է պարթևներին և մարերին՝ ժողովուրդների, որոնք դարեր
չարունակ ապրել են Հայերի կողքին: Եթե նույն Թորոս Թառխեն այդքան
անկիրակ էր, ապա որտեղի՞ց նրան աֆրիկյան Չալլամների ունայտական
պատկերազրույթունը:

Քանի որ «ելիմացիներ» (եղամացիներ, էլամացիներ) Հասկացություն-
ներ էլամ Հին պետության բնակիչների վերաբերյալ անսխալորեն է անգամ
Նոր կասկածանի Համար (Անշանի ելիմացի արքա Կուրոս Մեծի կայսրու-
թյան առաջացումից ի վեր էլամ այնչևև) կարող է թվալ, որ Հայերը
չնակերպ ուն պատկերազրույթուն գտնե անՀայտ կամ անՀետացած ժողովուրդին:
Սակայն այս ենթադրություն էն ճիշտ է: Թողմա Արծրունին մանրամաս-
նորեն նկարագրում է «ելիմացիների կորովի ազդեցություններին», նրանք
զենե-դրաճը և արազը, անգամ երաժշտական զործիչները, և իր նկա-
րագրությանը զուգահեռում է Եսայի մարգարեի իմ, 6 զբվազը²: Այսինքն,
ելիմացիները (էլամիտները) որպես Պարսկաստանի ապաճածում արդյոք էթ-
նիկ միավոր բուրբուրվին էլ էկզոտիկ երևույթ էլին Հայերի Համար: Ավելին,
խտորեն Հետևելով Գործք առաքելոցի Հիշատական է «զգզերի և լեզունե-

րի» ցուցակին, ուզզակի չենք գտնի որն է ժողովուրդ, որին Հայերը Հնուց ի
վեր չեն ճանաչել կամ որի Հնո մշակություններն առնչություններ չեն ունե-
ցել: Այսպիսով, չնայելուք բուն օտարական է նշել, և օտարականները չնա-
ցելու է չեն:

Հոգեզայտության մանրանկարներում իսկապես կան որոշ Հուշումներ,
որոնք թույլ են տալիս սյուժեների մի մասը (ուչ բուրբուր) նույնացնել Անդ-
րեսա առաքյալի Հնո եթովպիայում տեղի ունեցած և չնակերպի Հնո կապ-
ված միջնադարի հետ՝:

Սակայն նույնիսկ եթե այդպես է, և մանրանկարների ստորին Հատվա-
ծում ունենք այդ տեքստի պատկերազրույթուն, ապա սակայն է մնում երեք
Հարց.

1. Ինչու՞ է կանոնիկ աստվածաշնչյան սյուժեի մեջ Հայտնե-
վում բուրբուրվին այլ, այն էլ պարականուն, սյուժե,
2. Ինչպե՞ս է այդ սյուժեն Հայտնի դարձել 13-րդ դարի և ա-
վելի ուշ չըբնեի Հայ մանրանկարիչներին, եթե ունի ե-
թովպական և անզավեր ծագում,
3. Ի՞նչ իմաստային կապ կա Հոգեզայտաբան խորհրդի և այդ
պատմության միջև:

Ինչպես սեսանք վերլուծություն Հատվածում, եռաշերտ կոմպոզիցի-
այի վերին երկու շերտերը, որպես օրինակ, միշտ ունեն միևնույն բովանդա-
կություններ՝ փոքր զետապների տարբերակումներով, մինչև զեռ ստորին Հաս-
վածում փոփոխական են և մարդկանց ակադայությունն առՀասարակ, և
«Ընկալան նյութերն եզրինի մասին» աշխատանքը քննական դիտություն է ֆրանսիացի Հայագետ Լ. Մարիեսի Եզնիկ Կոչքացուն նվիրված աշխատության վերաբերյալ: Հիմնովին մերժելով Հայ Հեղինակ կողմից ուղղակի արձագանքներին և ուղղակի փոխառություններին մասին տեսակետը՝ Ն. Ազոնցը գտնում է, որ դրանց միջև առկա բովանդակային աղբյուրները պետք է բացատրել նրանով, որ «Հայաստանը միայն աշխարհակալների քաղաքական տեղանքների մրցարան չէր, այլև կոնստան և զուգափաստական մեծ շարժառիթներ, հին և նոր քաղաքակրթությանը նշանավոր Հանդույց»: Այդ դրբերից տեսարանը Հանդում է բնօգնարացնող այն եզրակացություն, որ «Եզնիկ աղանդոցն» իր նյութով է բովանդակությանը իսկ մի ինքնուրույն երևույթ է արթող Հայ գրականության մեջ» և որ «Եզնիկի գործը մի գրական զգրվել չենք է, թեև տարբեր նյութերից, տարբեր՝ քառասկի և ծագման»: Ն. Ազոնցը գտնում է, որ Եզնիկի բնագրային մեկնությունների ոլորտում ֆրանսիացի Հեղինակի կողմից գրական գործ է հաստատվել, սակայն անընդունելի է Համարում նրա կողմից առաջարկված «Վարդապետուծայ» վերանայիչ և անգլատաչելի՝ «առաջարկված գրքին թուր ուղղումները»: Տեսարանն բնօգնարացված մեկով պնդում է նաև, որ «... միտք չունենեք նեոմացնելու Մարիեսի աշխատության Հարցը: Թերեբունք մի կողմ՝ Եզնիկին նվիրված ուսումնասիրությունը այն թանկագին նյութ է, որ բերում է Հեղինակը Հայ գրական-պատմական գտնաձևակն»:

«Գրիգոր Գարբի Հարցարանը և Եզնիկ» վերլուծության մեջ Ն. Ազոնցը ցույց է տալիս, որ Հայ մասնագետությանը Հայաստանի «Հարցումն և պատասխանից Գրիգորի Մարթինի» Հիշատակարանը «Հնամանից նշար» է, «ժամանակով ինքնուրույն կյանք է ունեցել» և միայն Հնոս է մուտք գործել կանոնագիրք: Տեսարանի Համոզմամբ աշխատանքն ունի «երկնակի վերնադիր»: Դրանցից առաջինը («Գտնոն սրբոյն Գրիգորի») բովանդակ է մի Գրիգոր Լուսավորչի կողմից Հաստատված և Հայ կենդանու սեփականությունը դարձած Նիկիայի տեղեկատվողից երկու կանոններ: Իսկ երկրորդը («Հարցումն և պատասխանիք») մի «... Հարցարան է, մի տեսակ սրամտություն, ուր Հարց ու պատասխան մասնաշիջ մեկ տակ լուսաբանում են գանալան Հարցեր, որանք առարյա կյանքում ընդհանուր Հեռաբերություն նյութ են»: Բնագրային վերլուծության Հիման վրա Ն. Ազոնցը գրում է, որ «Հարցարանի» պատասխանները զերծ են «վարդապետական պատմականից» և Հենված են քաղաքապետ Աստվածաշնչի Հեղինակության վրա: Նա միաժամանակ փաստում է, որ «Հարցարանն երեց է, քան Մանդակունու անունը կրող ճարտ, ապիս է ուժ տալու մեր մի շարք դիտողություններին նրա և Եզնիկի փոխարարբերության նկատմամբ»:

Հինաժողովի «Եղծ աղանդոցի» և «Հարցարանի» կազմը, գիտնական ընդհանրացնում է, որ անկաս իր արտահայտած տեսակետից այդ երկու վավերագրերն էլ «... առաջնակարգ նշանակություն ունին, իբրև ժողովրդական մտաշխարհի թանկագին գույքեր»:

«Եւանգելի կարգաց քանից եղևնան Երիցո» ուսումնասիրություն մեղ մեծածնու Հայագետի տեղադրանքում է 1254 թ. ան «Արարանի ձևերով Իտալիայում գրված և Փարիզի ազգային մասնագործարանում պահպանվող ձեռագրերից մեկի բննական վերլուծությունը: Վերջինիս անհայտ նորոգչի կողմից ձեռագրի «Ազաթանգեղոս-Յանհատպատում» տեսքը փոխարինվել է «Յանհատպատում-Ազաթանգեղոս» տեսքի, «Թղ. 292-ի առաջին է-լի երկրորդ սյունակի կեսը սկսվում է եզնիկ երեքի Եւանգելիը, Հետևում է Թղ. 293-ը «Մեծամանիկի հայրապետացն Խոսրո» պատահուկ և վերջանում Թղ. 294 գրչի Հիշատակարանով»: Եվ քանի որ Հայագետներից ոմանք (Թ. Սարգսյան, Ն. Ակինյան) Եւանգելիը վերագրում էին եզնիկ Կոսրոսու գրչին և անհարգապես էին Համարում բնագրին, Ն. Աղոնցը «բարեբախտությանը Հայացք ունենալով խնդրի համար», աղբյուրառուում է այդ տեսակետի Հանգամանայից բնույթից: Փաստական նյութի և լեզվաճանաչ Հանձնաժողովի վերլուծության Հիման վրա տեսարանը Հանգում է այն Համոզման, որ Եւանգելիը եզնիկ Կոսրոսու «կնիքը» չունի և չի կարող թվագրվել V դարով, քանի որ «... Խոսում է եզնիկ Երեցի և Կոմիտասի ժամանակին»: Այդ Հիման վրա էլ նա ընդհանրացնում է, որ «Եւանգելիը պատկանում է ամբողջպես եզնիկ Երեցին, որ ժամանակակից էր Կոմիտասի և պետք չէ շփոթել եզնիկ Կոսրոսու Հետ»: Բովանդակության մասն ուսումնասիրության օրգանական շարունակությունն է «Հայր և Ակինյանի պատասխանին պատասխան» բննական գիտությունը: Հանգամանորեն բննարկելով եզնիկ երեքի Եւանգելի վերաբերյալ իր ուսումնասիրության դեմ ուղղված Ն. Ակինյանի «Նկարագիր կարգաց ի րանից եզնիկ» Հոդվածը, Ն. Աղոնցը կրիկի փաստում է, որ Եւանգելիը պատկանում է ոչ թե եզնիկ Կոսրոսու, այլ՝ եզնիկ Երեցի գրչին: Փաստական նյութի Հիման վրա նա եզրակացնում է. «[Հայր] Ա[կինյանի] «Պատասխան»-ի մեղ գործարարարը չգտանք և ոչ մի առողջ կետ ...: Միտալաչա դրույթուն, որպիսին արժանի չէր ուշադրության, որ մեծը Հատկացրեցինք և Հատկացրեցինք միմիայն Հարգելով, ինչպես միշտ, Հեղինակի անձը, որ արտակարգ տաղանդությամբ և սիրով աշխատում է այն դաշտում, որ մեզ այնքան մոտ է»:

Բննարկության աշխատությունների շարքին պետք է դասել նաև Հայագետի «Նմանվում» Քերտոնի նպիտոպոս (Հայկական «Կիրք Թորոցի»

մեծադատության շուրջ» ուսումնասիրությունը: Նրանում Ն. Աղոնցը փաստում է, որ որպես հավաքական աշխատություն Հայ եկեղեցու նամակային վավերագրերի «Գիրք Թղթոց» ժողովածուն Հին դարերից պատմական արև Հուշարձաններից է, որն արժանի ճանաչման է արժանացել գիտական աշխարհում: Նրանում կարևորվել են բոլոր այն վավերագրերը, որոնք Հայ եկեղեցու կողմից Համարվել են «առաջին Հեղինակվոր ու վճռորչ կենդանու դավանաբանության ճարտ Հարցերը մեկնաբանելիս»: Ժողովածուն, բոտ վերլուծարանի, «ոչ միայն անել է բոտ ծավալի, այլև զբա տանման Հատմամեր զերչ չեն մեացել կողմնակի ձևերի միջամտությունից», Հետևաբար՝ ժողովածուի որչ վավերագրերի ուսումնասիրություն «Հարկ եղած գրույթություն» են պահանջում: Որպես այդպիսիք նա մատնանում է Դվինի Մ ժողովի «Հեազույն երկու ուղիքծ» ուղղված առաքական (պարտից) Հավատացյալների և Քերտան քաղաքի Հեաագրոնողների անձանոթ Անվելիտո նպիտոպոսից: Հինահարցի Համակողմանի վերլուծության Հիման վրա Ն. Աղոնցը գտնում է, որ «Քերտան քաղաքի անունը կարող է ծագույն իբրև մի ընդհանուր կետ, որը Հարապատացնում է փեթովոլ նպիտոպոսին Քերտոնի Եւանգելի վարանդու: Տիմթեոսի (Է-լուրս կամ Կուզ Ա. Դ) Հետ»: Բննիցով ժողովածուի ստորեկից թարգմանված «Պետրոսից առ Անակիտս» նամակը, նա ցույց է տալիս, որ նրանում Հիշատակված Անտոկիտսյալը տոտադարձվում է Anatolius, որը ոչ այլ ոք է, քան Տիմթեոս Կուզի եղբայրը: Ն. Աղոնցը ենթադրում է նաև, որ սվերնական տեքստում եղել է «ձեմն նպիտոպոս Քերտան քաղաքի» ձևը, ով Հակաբողիկոսական ախնավոր շատազով Տիմթեոս Կուզի է: Բայց քանի որ դավանաբանական թրթիվում Անակիտոսի և Անատոկիտոսի անունների աղերսվում է Ջենտի Հրովարտակի Հետ, գիտնականը գրում է, թե իր «Կոտնումը նրանց նույնության մասին Տիմթեոսի և Անատոկիտոսի Հետ կորցնում է ոտքի տակի Հողը, քանի որ այդ անձանավորությունները մահացին են մինչև Ջենտը»: Եվ քանի զեա այդ պարագայի պարզված չէ, բոտ Ն. Աղոնցի, «ամբողջ շարադրանքը մեղ Հիմք է տալիս կասկածի տակ առնելու Անակիտոսի և Անատոկիտոսի մասին Հատմանը»:

«Հայոց նախնական պատմությունը» Սերետոն երկում և դրա աղերսները Մովսես Խորենացու և Փավոտո Բուզանդի երկախրությունների Հետ» վերլուծականում Ն. Աղոնցն անդրադառնում է Սերետոնի Պատմություն մեղ գտնվող Անտուեի պատմության բնույթի բնական վերլուծությանը, որը կազմում է «Քերտոնցու Հարցի» Հետ: Անդրադառնալով այդ Հարցում Հայագիտության մեղ տեղ գտած կարծիքների Համեմատական վերլուծությանը, պատմաբանն անընդունելի է Համարում Ք. Պատկանյանի, Թ. Միհրզապյանի, Ա. Գաբուզալյանի, Սա. Մախառայանցի և այլոց տե-

տակեանները: Սակայն «Հայոց նախնական պատմութեան» Հեղինակի իր որոնումներում Ն. Աղոնցը Հանգուսէ է որչ Ժայռահէղ Հեռուսթունները: Խոսքը մասնագրաստի վերաբերում է այն քանիք, որ նրա Համոզմամբ «Հայոց պատմութունը» չի կարող ծագած լինել VII դարից առաջ»: Սակայն նա դեմ է Խորենացու «բացասական քննադատութեանը» և կորույժ ներմուծում է նրան «կեղծարար» անվանելը: Թեև տեսարանը գրում է, որ ի հակադրութիւն «Փամատուսի անտարբերութեան» Հայոց պատմութունը «ներծրված է Հայքենասիրական խոր զգացմունքով» և որ այն «յուրահատուկ պատկ է Հայոց զանհի փառապանծ Հովանդորդների սեպչակէն», Համարում է նաև, որ «Հարկ է զանի Խորենացու անունը» Հայոց պատմութեան» վրայից և վերջինի գտնել Անանուսի կամ ազիկի ճիշտ գրականութեան անվավեր երկերի շարքը»: Ու թեև աներկբայի է, գրում է նա, որ Խորենացին պատմագրութեան զարաշրջանի անկասկածոր ներկայացուցիչներից մեկն է, և Համոզմամբ այն զբոսախ Մովսես փիլիսոփան, որի մասին գտնուելով, խմբում է Հիշատակումը Ղազար Փարպեցին: Նա մեծ փառք էր վայելում չնորճիվ թարգմանական գրականութեան սպարեղում ունեցած զորուսնութեան», Ն. Աղոնցը նույնքան Հիմնավորված է Համարում, որ Մովսես Խորենացու «Հանձնարքը անվան տակ Հայտնի նպատակներով թողարկվել է «Պատմութունը», կազմված նշանակալորեն ազիկի ուշ՝ մեղ անՀայտ, ոչ նվազ գրական բնույթով, Խորենացու ունեցող Հեղինակի կողմից»:

Պատմագրութեան Հայքենասիրական այդ մտտեցման շարունակութունը կարելի է Համարել նաև Հատորով գետեղած խորենացիագրութեան շարքը՝ «Մովսես Խորենացու» «Հայոց պատմութուն» քննակնի մասին», «Մովսես Խորենացու վերաբերմամբ պարոն Լեփի Թորի մասին», «Խորենացիական խարցն ու խարց վարդան Հացունի», «Անուղ և Խորենացին» քննախոսութունները: Դրանցից առաջին երկուսն ընկրված է Հ. Լևիի «Իրիպար», բայց չհիմնավորված այն տեսակետի Համակողմանի մերմտանը, թե իր Խորենացու Պատմութունը գրվել է 876-885 թթ. միջնակայքում: Հակադրելով միեթարքայն Վ. Հացունու տեսակետին, որը Խորենացու պատմութունը Համարում է V դարի գործ, Ն. Աղոնցը պնդում է, որ Պատմութունը գրվել է «Սեղբեստորոսի և Ապիսարի թարգմանութունից հետո, այսինքն՝ 696 թ. ոչ չուս: Եվ, վերջնապես, տեսարանը Հիմնովին ներմուծ է «Աղեղին Խորենացու Հնա նույնացնելու» Ն. Ակիլյանի «երեք Հանգրք»-ականները»:

Ուսումնասիրվող Հիմնահարցերի նկատմամբ արժեքային բնույթով բացնող մտտեցումները ենք Հանդիպում նաև Հատորում գետեղված պատմագրութեան մյուս աշխատանքներում:

«Թննություն Մովսես Կաղնկատպացու» սովորածովայն աշխատանքում տեսնվածոր պատմաբանը Համակողմանի քննական վերլուծութեան Հիման վրա Հիմնովին մերմուծ է միեթարքայն Վ. Հացունու «Կաղնկատպացի կարեր է դարուս» վարկանքը և փաստում է նրա VII դարի Հեղինակ լինելը: «Փոքր Սոկրատի հեղինակը» քննախոսութեան մեջ, իրեն Հատուկ Հետևողականութեանը Ն. Աղոնցն անդրադառնում է Մեծ և Փոքր Սոկրատների փոխադարձ Հարաբերութունների, ինչպես նաև Փոքր Սոկրատի բնույթի թարգմանութեան ժամանակի և Հարակից խնդիրների լուսարանմանը: Պատմաքննական կարևոր արժեք է ներկայացնում նաև «Այբի ավտարանի գրություն տարին» ուշադրով Հողվածը, որում տեսնվածոր պատմաբանը, Համադրելով փաստական նյութը, բնույթով չէ Համարում միեթարքայն Հայքերի տեսակետ և Հիմնավորված կերպով ցույց է տալիս, որ «Մլրե թագու Ալիսարանը գրված է ո՛չ 851 և ո՛չ 902 կամ 922, այլ 862 թվին»: «Հանունների քաղարական ավանդ» Հողվածը միտված է Հիմնադրելու, որ մերդուսիսի անմահ տաղանդագործութունը «խոշոր քաղաքակրթութեան հիշատակի պոմնացումն է», որի գանձաքանից կարելի է բավարարուլ առգած երկու հիմնակարի մարդկրոով՝ «սեթ արեմտյան քաղաքակրթութեան և Հարգանք ազգային սպարեւելի»: Ելակետական Համարելով, որ Դափնու գրականութեան մեջ «անցյալն իր Հիշատակներով լավագույնս միջոց է սթափելու ազգային ինքնագիտակցութեան, վառելու Հայքենասիրութեան ոգին», Ն. Աղոնցը «Դափնու Քնն» վնայ պատմական իմքը և զարգախարստական արժեքը՝ վերուժականում Հիմնավորում է, որ թեև այն Դափնու «պատմական վկայերից լավագույնը չէ արվեստի տեսակետից, բայց կարևորագույնն է Հայագրականիտիսի խորտա մտնով», քանի որ Հեղինակը մերմուծ է «Հատուկ նշու առաքելի գործունիքն» նախընտրելով «տաղանդ և տալ Հայքենասիրութեան մի տպը, որ լինի բացարձակ արժեք և պահել իր նշանակութունը բոլոր պայմաններում»:

Հատորում գետեղված աշխատանքների շարքում արժանահիշատակ են նաև «Փառկոխյա Անիտարանի արվեստը», «Գրական Յղատարին. դեկադանա և վարտիզմ», «Գնչիկապան և կցորդ խնդիրներ», «Խոսք Անիտա Անարանի մասին», «Խալատոր Արզումանի վախճանը» քննախոսութունները, ինչպես նաև՝ «Թննական տեղեկագր պրոք. Ն. Աղոնցի» գրախոսականը:

Այդ մտնից թույլ են տալիս փաստել, որ Ն. Աղոնցի գրախոսովը Հատորը դիտաճանաչողական և տեսական մեծ արժեք է ներկայացնում: Մեծ է նաև ղոց. Գ. Հ. Հովհաննիսյանի ավանդը, որը մանրագրութունների միջոցով դիտական Հակիրճութեան և մեծ ճշգրտութեան պարզարանել է տեսական-պատմական, մասնաճակագրական, պատմականութեան և պատմականագիտական բազմաթիվ Հիմնահարցեր: Անուրանույ է նաև Գ.

Հ. Հովհաննիսյանի մեծ ներդրումն աղոնցադիտության մեջ: Նրա ֆանք-բլոգ է աշխարհով մեկ սփռված արխիվներից Հավաքվել, ամբողջացվել, և գիտական աշխարհին ներկայացվել չափազանց արժեքավոր և արդիական այս ժողովածուն, որում արտացոլված նյութերը կարող են սկզբնաղբյուր Հանդիսանալ ապագա գիտական Հետազոտությունների համար:

Ալիսիա Բարաչան

ՀԷՅ ԵՎԵՂԵՑՈՒ ՀԵՆՐԵԳՈՒՏԱՐԵՆ

(գրքի տեսություն)

ՀԷՅ ԵՎԵՂԵՑՈՒ ՀԵՆՐԵԳՈՒՏԱՐԵՆ, պրակ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԵՈՒՊՈՒՄՆԵՐ (Հրատ. են պատր. Սաթնիկ Բարայանը, Պետրո Հովհաննիսյանը և Տ. Ղևոնդ քչե: Մայրխյանը), Ա. Էշմիածին, Մայր Աթոռ Ա. Էշմիածինի Հրատ., 2008, 256 էջ:

Տպագրվել է Տ. Վիզեն արք. Այվազյանի մեկնատուրյամբ:

Այսօր, ազիլի քան հրբեէ, Հասունացել է Հայ եկեղեցու մասին անսպասելի և Համատարակչոված ուսումնասիրությունների կատարելու հորքը, քանի որ Հայագիտության շրջանակներում նշված Հիմնահարցերի Հետևազված Համարժեք աշխատանքները գեոուս քիչ են, իսկ Հրապարակում գտնվող աշխատությունների մեծ մասում Հիմնականում իշխում են քեուացված գնահատականները: Այդ տեսանկյունից վերջին տարիների Հայագիտական ձեռքբերումների շարքում կարևոր իրադարձություն է Հայ եկեղեցու Հանրագիտարան շարքի «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» պրակի Հրատարակությունը:

Իր կաուցովածքով և բովանդակային ուղղվածությամբ Հանրագիտարանը գեոուս XIX դարի 30-ականներից սկզբնավորված և մինչև մեր օրերը շարունակվող երևի արանց կենսադրական շարքի օրգանական շարունակությունն է: Սակայն, այնուամենայնիվ, «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» Հանրագիտարանն իր նախորդներից տարբերվում է նրանով, որ ասանիլի համապարփակ է (ներաուում է յուր 132 կաթողիկոսներին), ամրոզական և ընդհանրացված, քանի որ շարադրվել է նորագույն շրջանի Հայագիտական ձեռքբերումներով:

Հանրագիտարանում ներկայացված նյութերը բավականին բազմազան են և բազմազան: Պայմանականորեն դրանք կարելի է դասակարգել 3 մեծ խմբերի՝ կրոնադավանաբանական, պատմական, Հասարակական-քաղաքական և մշակութային, Հիշելով Հանդերձ, որ այդ դասակարգման սուսմանները Հարաբերական են, քանի որ եկեղեցական Համակարգը բազմահարթ է, և նշված սյուրաներից յուրաքանչյուրը Հավասարազես Հանդես է գալիս յուր Հարթություններում: Բազմաթիվ թիկերով կազմված լինելով Հասարակական կեցության, Հասարակական-քաղաքական և մշակութային պատմությանը՝ անկախ դարաշրջանից և միջավայրից եկեղեցին այդ ուրաներում ներգրել է կենսունակ ու Համապարփակ արժեքների մի ողջ Համակարգ, որն իրենով պայմանավորել է ինչպես Հասարակական կեցութ-

յան, այնպես էլ նրա տարբեր ոլորտների իմաստավորված և նպատակամղված գործունեությունը: Գարբիչ շարունակ կրոնական արժեքներով են իմաստանցել և գործառնել պետախթորավոր և բարոյական Համաարկաբեր, և միանգամայն օրինաչափ պետք է Համարել այն, որ Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կրոնի ու եկեղեցուի կողմից ներդրված այդ արժեքները գիտակցություն ղրորաուսմ նույնացվել և բնկավիել են որպես կոնկրետ ազգանշանութային բնդհանրություն պահպանման Հիմք և ոգի:

Այդ տեսանկյունից պարկել բնդհանրացնող գեհՀատականը կարելի է Համարել Գարբիչի Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունից հիցրել, որ տեղ մասնավորապես նշվում է, որ «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» Հանրագիտարանը, ներկայացնելով մեր աստվածաշնորհ Հայրագիտաների դրվական կյանքն ու գործունեությունը, զիր է Հանուսմ նաև Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ երկհազարամյա պատմությունը՝ շարադրված Ամենայն Հայոց Կաթողիկոսների անձնուրաց սիրով ու նվիրումով առ Բարձրյայն Աստված և առ ազգն Հայոց»:

Հայրագիտական այդ տողերը նաև վկայում են, որ Հանրագիտարանի Հեղինակային կազմին Հաջողվել է ամփոփ ձևով ներկայացնել Հայ Առաքելական Եկեղեցու Հնագիտող Հաժառաքյին դիմագիծը: Պրակուսմ Հակիրճ, սակայն բովանդակային ամբողջության մեջ ներկայացված է Հայ եկեղեցու Հաժառաքյին ուղղափառված նույնպես առՀատական բերորաբանական և բրիտանաբանական զարգապատմությունը՝ Գրղղոր Լուսավորչից ժառանգված այն Հաժառաքը, որին ապավինելով նախանձանիղիը Հայ եկեղեցին, իր Հոգևոր առաջնորդների դեկավարությունը և 1700-ամյա սրբազոծված ամբողջությունը, անվերապահորեն դիմագործ է կանգնել ցանկացած աստվածորանական շեղման և Հիմնովին մերժել բրիտանոնության պատմությունն ուղեկցող դաժանաբանական ամեն մի «նորարարություն»՝ Հանձնի աղանղների ու Հերձվածությունների:

Հանրագիտարանում իր դիմանկիզմի մեջ է ներկայացված նաև բրիտանոնության դաժանաբանական վեների բուն էությունը, և դրանց նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշումը: Հաժառաքյին նշանկություն այդ Հիմնահարցերին վերաբերող ամփոփ մեկնաբանությունները բնթերցողին Քույլ են առկա ոչ միայն ծանոթանալ եկեղեցուական պատմության մեջ ազդեցիկ գեբրակատությունն ունեցած այդ վիճարանությունների պատճառահասկանաբային առանձնահատկություններին, ժամանակի պետական իշխանությունների կրոնական քաղաքականության էությունն ու ուղղվածությունը, այլ և դրանց նկատմամբ նվիրագիտական կենտրոնների դիրքորոշումը:

Այդ ամենն աներկբա վկայում է նաև, որ Հանդես գալով աստվածաշնանկան անախ Հնժարտությունների և հրաց զլառ Հնձված բնդհանրական ու անդախն Հայրերի ուղղափառված մեկնությունների դիրքերից Հայ եկեղեցին և նրա աստվածաբան վարդապետներն ի ցույց են դրել ոչ միայն այն, որ քաշածանոթ են բրիտանոնական աշխարհի ներքին անցուզարժին, այլ և դարձուսմ մասնակցություն են ունեցել վերջինիս Համաարգում տեղ գտած զավանաբանական զարգացումներին և զոգմատիկական բնույթի տարբերությունների նկատմամբ վերաբերմունքը մշակելու գործին: Եվ որ ամենախարերն է, իր Հայրագիտաների զլխավորությունը Հայ եկեղեցուն կարողացել է աստվածարանական պաշտոն մակարդակով հավաղավորել ըրոր այդ «նորարարություններ» և անվտոյան պաշտպանել ուղղափառությունը:

Հանրագիտարանը սկզբնաղբյուրային նշանկություն ունի նաև բրիտանոնության պատակառումների Հիմքում բնկած կանոնական տարանկությունների լուսարաննա տեսանկյունից: Նրանում տեղ գտած նյութերն ամփոփ տեղեկություններ են բովանդակում բնդհանրական եկեղեցու որպես բույր եկեղեցիների ամբողջության նախնագիտող ուսմունքի մասին: Հայոց հայրագիտաների գործունեությունը ոչ միայն իրենովին մերժվում է «նեկ կենտրոնից դեկավարվող եկեղեցու» ըուն ղրորաբուն, այն՝ նման նպում ունեցող նվիրագիտական կենտրոնների հավակնորդները: Աստվածաբանական և կանոնական պահանջող մակարդակով Հիմնավորվում է նաև ի սկզբանե կանոնական իրավունքով ամբողջված Հայ եկեղեցու ինքնակառություն փաստը: Արժանապես մերժվում են այս կամ այն նվիրագիտական կենտրոններից Հայ եկեղեցու «ենթակայության» մասին Հակալիանոնական սնանկ պատկերացումները: Այդ տեսանկյունից Հարկ է մատնանել Հանրագիտարանի դրական ուղղվածությունն ևս մեկ ոլորտ, նրանում արժեքավոր տեղեկություններ են պարունակված բնդհանրական եկեղեցու տարբեր Հաժառաքյին, Հայ եկեղեցու միջկեղեցական Հարաբերությունների պատմության, ինչպես նաև նրա նկատմամբ բույր եկեղեցիների վերաբերմունքի (ինչպիսիք են օրինակ Հայ-բուսպանդական, Հայ-կաթոլիկ բազմաղաթյա Հարաբերությունները և այլն) մասին:

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության էջերը Հարուստ են մեր ժողովրդի Հաժառագոր Հոգու և տաղանդավոր մաթի արամաներով, - օրհնության գրում մատնանում է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, - Հերոսական մարտունով ու սիրահեքներով, որոնք աստվածաբանության և Տարեմաներում օրինակներ են սերունդների Համար: Երանանշուրհ մեր Հայրագիտաների առաջնորդությունը է, որ անցյալի ղիզարին փորձություններով լի ժամանակներում մեր ժողովուրդը պահպանել է ազգային-եկեղեցական արժեքները, ինքնությունն ու դիմագիծը»:

Այդ Համատեքստում Հանրագիտարանն արգիական մեծ Հնչեղություն ունի, քանի որ լինելով Հայ ժողովրդի պատմության անքակտելի մասի՝ Հայ առաքելական եկեղեցու պատմության (Հավատարմության նաև պատմության ցանկացած ժամանակահատվածի) անաչառ ուսումնասիրությունն է յուսաբանում, խիստ կարևորվում է եկեղեցու ազգասպար, ազգայասպան, միաբնիկ և կարգավորիչ գործառնայնների ուսումնասիրությունն սեանկնումնից:

Հայ եկեղեցին Հայ ժողովրդի պատմության անբաժան առարն է. վերջին երկու Հազարամյակների նրա գոյության Հոգևոր-քաղաքակրթական հիմքը: Հանրագիտարանում գետնեղած նյութերն օրյկնիվումբյան դիրքերից ընթերցողին են ներկայացնում Հայոց կաթողիկոսների և նրանց կողմից ղեկավարվող Հայ եկեղեցու Հասարակական-քաղաքական քաղաքական գործունեությունը: Այդ Համատեքստում մեծ արժեքություն է ունի Գրիգոր Լուսավորչի կողմից արքայաթմամբ և Հայ եկեղեցու նվիրագետների կողմից անխաթար պահպանվող, Հայ ժողովրդին և ազգային պետականությանն անմասնորոշ նվիրված եկեղեցական պրակտիկայի դիմադիր պատմության անկողմնակալ յուսաբանություններն ու արձևությունը: Գրախոսողը աշխատանքում Հանրագիտական մակարդակով շարադրված է Հայ ժողովրդի պատմության փոթորակից բոլոր ժամանակաշրջաններում (Պարսկաստանի և Լատնական (Շտապալան)՝ Բյուզանդական) կայսրություններ, արաբական, սելջուկյան, մոնղոլական, թուրքմենական ցեղերի, Օսմանյան Թուրքիայի և Անգլիայի Պարսկաստանի, ցարական իշխանության և խորհրդային տարիների) Հայոց կաթողիկոսներին և, բնականաբար, Հայ եկեղեցու Հասարակական, քաղաքական, տնտեսական և ազգային քաղաքական գործունեությունը:

Հանրագիտարանում արգիական մեծ նշանակություն ունեն Հատկապես պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների արձևությունները: Հայոց պետականությունների ստարբելու, դրանց ամրապնդմանը և անկասկածության սպառնումն ուղղված եկեղեցական պրակտիկայի գնահատումները: Մեծ արժեք է ներկայացնում Հատկապես ինքնուրույն-ազգային քաղաքականություն վարելու պետական պրակտիկայի եկեղեցական օժանդակություն, ինչպես նաև բուն եկեղեցու կողմից ազգային-պետական առանձին գործառնայն իրականացնելու պատմական փորձը ընդհանրացումը: Մեծ արժեք է ներկայացնում նաև օտար նվաճողների քաղաքային ընդդիմության պայմաններում եկեղեցու ազգապահպան և ազգահավաք գործունեության ընդհանրացված նկարագրությունը: Հանրագիտարանը մեզ է ներկայացնում Հայաստանի պատմական Հատմաններում և օտար տարածքներում բնակվող Հայ ժողովրդի ազգապահպանության գործում Հայ եկեղեցու ներդրած անուրանալի ավանդը և այն Հոգա-

արությունը, որը նա դրսևորել է զաղութահայության և սփյուռքահայության հանդեպ: Հայ եկեղեցու ազգապահպան, ազգահավաք և միավորիչ նշված գործառնայններն իրենց գերբ պահպանել են նաև մերօրյա Հայաստան-սփյուռք քաղաքակրթական ու դիմադիր փոխհարաբերություններին սեանկնումնից:

Գարեգին Բ Կաթողիկոսն իր օրհանության գրքում մասնատելում է Հանրագիտարանի պրակտիկ նշանակությունն մեկ այլ ոլորտ ու, այն, որ «Երասնանորձ մեր Հայապատանների առաջնորդությունը է, որ անցյալի զժմարին փորձություններով լի ժամանակներում մեր ժողովուրդը պահպանել է ազգային-եկեղեցական արժեքները, ինքնությունն ու դիմադրիչ»:

Հայ եկեղեցու պատմությունը և Հոգևոր դասի ազգամշակութային գործունեությունը թեև Հայագիտության մեծ բավականին ուսումնասիրված է, այդուհանգիմբ դեռևս կարոտ է Համակարգային ու ամբողջական ուսումնասիրության, և Հանրագիտարանում գետնեղած Համապատասխան նյութը պետք է որակի որպես այդ բնագավառի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձերից մեկը: Այն՝ մեկանում խիստ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել Հայոց գրքերի գյուտի, մասնակաթության (Հատկապես՝ պատմության, փիլիսոփայության և գրականության) գիտատեսական ուսումնասիրության ոլորտում: Ցավոք պատշաճ ուշադրության չի արժանացել կամ երկրորդական պլան է մղվել գիտության (հատկապես՝ բնագիտության), աստվածաբանության և Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի առանձին այլ ոլորտների ուսումնասիրությունը: Ինչն են նաև կրոն-ազգաբարեկրթությունների, ազգապահպան ինքնատույնացման (ինչնուսության), սեփական և օտար միջավայրում գրանց դրսևորումների և առանձնահատկություններին նվիրված ընդհանրացնող վերլուծությունները: Այնինչ՝ Հասարակական ու Հոգևոր կյանքում տեղ գտած ներկայիս իրողությունները քրատայար պահանջում են Հնչց նշված Հարցերի Համայնի ուսումնասիրություն:

Քաղաքակրթության պատմության ողջ ընթացքում այն Հանդես է եկել իրենուսության բարձրագույն աստիճանի, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքակրթությունը վառ արտահայտված մշակույթ է, իսկ ժողովուրդների (Հատկապես տիրապետության և ենթակայության Հարաբերություններում գտնվողների) պատմությունը, Հավասարապես նաև ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացները, անհնար է պատկերացնել առանց ազգամշակութային և ազգայնականացման սցիտանների Համագործակցության և տեղաշարժերի: Այդ Հիմնահարցերը կարևորվում են նաև այն տեսանկյունից, որ քաղաքակրթությունների երկիտություն ոլորտում արևմտյան ունիվերսալիզմն այսօր ավելի շատ կոնսոլիդատային, քան Համարդասացության երազիմաններ է մնում:

Այդ Համառոտագրում զրախոսվող աշխատանքի զբաղման կողմերից պետք է Համարել այն, որ նրանում ամփոփ կերպով ներկայացված են նշված ընտանիքները լուսաբանող լուծումները: Արժեքային այդ մոտեցումները, բնութագրելով Հայոց Հայրապետների քաղաքակրթական-մշակութային գործունեության տեսանկյունից, պատմապատմորեն Հաստատված պրակտիկայի Համարում են ձեռք բերում Հատկապես մեր օրերում ասանճատուկ նշանակություն ձեռք բերող քաղաքակրթությունների վրա հենված աշխարհակարգ ստեղծելու Համատեքստում:

Քաղաքակրթություն-մշակույթ-ազդ-կրոն իդենտության Հիմնահարցերի Համակարգված վերլուծությունն ու լուսաբանումը մեծ կարևորություն ունի նաև արդի աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված հոգևոր «վերածննդի» ավելի ճիշտ «արդի կրոնական (ըստսոսիալ) ուսումնասիրության տեսանկյունից»: Կրոնական մտղեանկիվ արդի կողմնակիցները Հետևորդներ են ձեռք բերում այն տարածքներում, որտեղ նախկինում նրանք երբեք չեն գործել: Ե «տեղաբերիկ» ավանդական կրոնների Համար այդ «կրոնական վերածնունդը» պայմանավորող մոդեռնացման գործընթացների կարող են ճշմամասնային պայմաններով մեկ: Կրոնների «արևմտականացում», հավատարմության մաս Արևմտյան «արևելականացումը» նորանոր կրոնական շարժումներ են ձևում, որոնց արմատավորումն ուղղակի սպառնում է ազգամշակութային և ազգայնորենական իդենտության նախկին ձեռքերին, քախի որ սեփական «ես»-ի վերաբերումս նախադրյալով գոյափոփում է նախկինին Հոկազիր (որը ուսՀաններում նաև Քչեմական) միանգամայն մոր իդենտություն: ԱՀա այդ տեսանկյունից Հայ կենդեցու մշակութային գործունեության ուսումնասիրությունը չափազանց արդիական է գլոբալ քաղաքականության քաղաքակրթական-մշակութային շփումների Համատեքստում Հնարավոր բախումները կանխորգելիլու տեսանկյունից:

Մեր օրերում Հայ կենդեցու ազգամշակութային ժառանգության Համայնք ուսումնասիրությունը թիվարգրված է նաև Հայ ազգին բնորոշ իդենտություն պահպանման և վերաբերությունների Հրամայականով: Դա անհրաժեշտ է Համաշխարհայինացման արդի գործընթացներով պայմանավորված մրցակցող իդենտությունների մակարդակային, իդենտության նոր օրակները որոնման, անՀատկան մակարդակում Հասարակական-տնտեսական մոդեռնիզացիայի կողմից ծնած օտարումը Հաղթահարելու, ազգային պատկանելության ընկալումների աշխուժացման և Հոգևոր կյանքին կապված քաղաքակրթական աշխուժացման հարցերից: Նաև պետք է նկատի ունենալ: Որ իդենտության (անՀատկան, ազգային, ռասայական, քաղաքակրթական և այլն) Հարաբերությունները յուրահատուկ ձևով կարող են խթանվել Հա-

զորակցության և տեխնոլոգիական միջոցների աննախադեպ ծավալման արդյունքում:

XX դարի 90-ական թվականներին պատմական թատերաբեմ իջած «ներդաշնակ աշխարհակարգի» փոխարեն աստիճանաբար ու բարձրագույն է «բախվող քաղաքակրթությունների» աշխարհակարգ: Այդ Համատեքստում ևս «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» Հանրագիտարանն արդիական և Հույժ կարևոր նշանակություն ունի: Համաշխարհայինացման (գրաքննադատ) պայմաններում քաղաքակրթությունների փոխարինարության իմենակարգն աստիճանաբար մերանվում է համաշխարհային քաղաքակրթության կարևորագույն գործոնի: Քաղաքակրթությունների լոկալ րախումները ձևավորվում են ամերիկանացման, արևմտականացման և «ազգայնացման» ղեմ ոչ արևմտյան քաղաքակրթությունների հակադրության տեսքով: Հոգևորկրոնական որոտած ամենայն օրոքյառը հակադրվում են իմր (ավանդականը) և նոր (մոդեռնը): Ընդգծված արտահայտություն են ստացել նաև արևմտականացում (փաստերացում) - նոր արևելականացում (նեոօրիենտալիզմ) կրոնաքաղաքական հակադրությունները: Այդ ամենին այսօր փոխարինելու է զայիս քաղաքակրթությունների բախումը, ինչը, ինչպես նաև արևմտյան արժեքների «ներդրման» Հանասոկանությունը չափազանց արդիական են դարձրել քաղաքակրթական և մշակութային արժեքների դիտատեսական ուսումնասիրությունը: Քաղաքակրթությունը, ինչպես արդեն նշեցինք, սերտորեն աղերսվում է ժողովուրդների և ազգերի իդենտության Հետ և միաժամանակ Հանդես է գալիս որդեգր մարդկային ասոցիացիայի ամենակայուն ձև՝ «արտակարգ Հարատևելության իրականություն»: Խալ կրոնը օրեկրոնորեն հանդես է գալիս քաղաքակրթությունը բնութագրող կարևորագույն տարրերից մեկի որակով:

Գրախոսվող Հրատարակության պատկերի նշանակությունը և արժեքը պայմանավորող գործոնների շարքում մեծ կարևորություն ունեցող Հայնորդ Հիմնախնդիրը կապված է Հայ կենդեցու և Հոգևոր դասի կրոնական, Հասարակական-քաղաքական, մշակութային-քաղաքակրթական և գործունեության այլ ոլորտների վերաբերյալ նախկինում ձևավորված արժեքների վերաբերման, Հայ կենդեցու պատմության միակողմանի, սուբյեկտիվ, երբեմն էլ անչեղով չհիմնավորված մերժողական մոտեցումները Հաղթահարելու պահանջի Հետ: Գաղտնիք չէ, որ վերջին արդիներին Հայաստանի Հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում տեղ դրած արմատական փոփոխությունները բազմաթիվ Հիմնախնդիրներ են առաջադրել Հասարակական և անՀատկան դիտակցությանը, ազգային Հոգևորնությունն ու զաղափարաբախությունը: Այդ Հրատաղ ինդիվիդուալությունը Հրամայաբար պահանջում է Հայ կենդեցու Հավատարմին ասանճ-

նահատելությունների համակարգային կրոնափառական ուսուսմանը, թյու՛ն: Դա հույժ կարևոր է հատկապես այն մարտահրավիրների համատեքստում, որոնք այսօր ուղղված են Հայ եկեղեցուն Հայաստանում ազանկարգությամբ տարածման և արմատավորման տեսքով: Այդ Համասերտում պետք է կարևորել նաև «Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» Հանրազգիտարանի զինատարակառուցիչ ուրույն նշանակությունը: Այն և նմանատիպ արժեքավոր մյուս Հրատարակությունները յուրահատուկ «պրոֆիլիտիկ» զեր և նշանակություն ունեն աշխարհայացքային մակարդակում Հայ ժողովրդի առջև կանգնած Հոգևոր մարտահրավիրները չեզոքացնելու, հավասարապես նաև ազգային Հոգևոր արժեքները պահպանելու և վերարտադրելու գործում:

Եվ, վերջապես, պետք է մատանշել զբախտավոր աշխատանքի արդիական նշանակության և կարևորության ևս մեկ տեսանկյուն: Բազմաթիվ գործունեություններով պայմանավորված արդի հասարակական կյանքում ուրույն տեղ են զբաղում նաև շարունակ խորացող կրոնական բազմակարծությունների և կրոնների երկխոսության Հիմնահարցների համակողմանի վերլուծությունը և արձևումը: Այդ Համատեքստում զբախտավոր աշխատանքի իր էությունը և ուղղվածությունը կարող է կապանորեն նպաստել զազանարանական փեմարանություններից զեր միջկեղեցական բազմահարթ Հարաբերությունների տեսական և գործնական Հիմնահարցերի մշակմանը: Աշխատանքում քննարկվող Հիմնահարցերի զիտատեսական մշակումները կարող են նպաստել ինչպես ներեկեղեցական, այնպես էլ միջեկեղեցական և միջկրոնական կյանքի տորբեր ոլորտներում Հայ եկեղեցու առջև կանգնած պրակտիկ խնդիրների վերլուծությանը և համակողմանի արձևումները:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսներ» Հանրազգիտարանն ունի զիտանշանազողական մեծ զեր և տեսական նշանակություն: Այդ գործում արժանի պետք է մատուցել ինչպես Հանրազգիտարանի խմբագրական հանձնաժողովին (Եզնիկ արք. Պետրոսյան, Պետրոս Լուվանիսյան, Արշակ Մարդոսյան, Գեորգ Տեր-Վարդանյան), այնպես էլ Հողվածադիրներին: Նրանց հետևողական ու բարեխիղճ աշխատանքի արդյունքում են զիտական հակիրճությունը և մեծ ճշգրտությունը ընթերցողին մատուցվել հավատարային, պատմաբնագիտական, տեսական-պատմական, ժամանակազրտական, մշակութային և բազմաթիվ այլ Հիմնահարցերի հետեղական պարզարանումները: Նրանց զիտական պրպտումների արմատարանական արդյունք է նաև տնգուզական այս Հրատարակության նախապարտատությունը, որը այսօր իր արժանի տեղն է զբաղել Հայ տեսական մտքի զաննարանում:

Այդ կապակցությունում բնգհանրացող պետք է համարել Գարեթին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետևյալ տողերը. «Մեր զեսահատանքն ու

որհնություն ենք բերում այս աղնիվ նախաձեռնություն կազմակերպչներին և Հեղինակներին իրենց զողնիլ, Զնադր աշխատանքի համար: Թող Ամենակարող Տերը իր Սուրբ Արև Հոգևոր ներքո պահպանի զրչի և մտքի ազգին չնարժով լի մշակների և մեր ժողովրդի աղոթասեր զազակների սրտերում միշտ վառ պահի որդիական սերն ու նվիրումը Հանգեպ մեր Սուրբ Եկեղեցին և Մար Աթոռ Սուրբ էջմիածինը»:

Պ. Ա. Բարսեղյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՆՅՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԻԱՆ ԹԱԳՎՈՐԻ ԳԱՀԱՎԱՄԱՆ ԺԱՐԱՆԿՎԱՅԻՆՈՒԹՅԱՆ (4-րդ դարի 30-40-ական թվականներ)

Երա Հովհաննիսյան

Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրությունը Հայագիտության կարևոր ճյուղերից մեկն է, ուստի նրա մեջ առավել կարևոր նշանակություն ունի մաշ շրջանի պատմության հետազոտությունը: Քնն վերանշյալ շրջանը շատ հետաքրքիր է և կարևոր, այնուամենայնիվ սկզբնաղբյուրների անբավարարության պատճառով մինչև օրս նշյալ ժամանակահատվածը բավարար կերպով չի ուսումնասիրվել, և մի շարք կարևոր հարցերի մինչև այժմ էլ չեն արվել սպառել պատասխաններ: Մասնավորապես կարևոր նշանակություն ունի Տիրան թագավորի գահակալման ժամանակաշրջանում պետության և եկեղեցու Հարաբերությունների ուսումնասիրությունը, որտեղ մի շարք ուշագրություն արժանի իրադարձություններ են կատարվել: Սույն հետազոտությունը նվիրված է այդ բացը լրացնելուն: Հայտնի է, որ Տրդատ Մեծ թագավորի օրոք արքունիական իշխանության կողմից քաղականին մեծ աջակցություն էր արվում Հայոց եկեղեցուն, սակայն նրա Հաջորդները՝ Խուսրով Կողպիկ և մասնավորապես Տիրանի օրոք իրավիճակը որոշակիորեն փոխվեց: Ճնշել է 4-րդ և 5-րդ 30-40-ական թվականներին զեռուս շարունակվում էր պետության և եկեղեցու միջև Համագործակցությունը, սակայն այն քաղականին թուլացել էր: Սույն հոդվածում կիրթնելը հետազոտել, թե ինչու երկից մի Հարաբերությունները թուլացան և հետագայում դարձան թշնամիակ:

Հայտնի է, որ Տիրան թագավորի գահակալման տարիներին իր արջորդել են չորս կաթողիկոսներ՝ Վրթանեսը, Հուսիկը, Դանիելը և Փառնը: Յուրաքանչյուր, արշարյաների սակավության պատճառով մեկը չենք կարող արտի կաթողիկոսների մասին բավարար հետազոտություն կատարել: Բայց այնուամենայնիվ, եզրմ նյութի սահմաններում կիրթնելը վերլուծել այն: Ինչպես գրտոնք, Տիրանի գահակալման առաջին շրջանում Հայոց կաթողիկոսն էր Գրիգոր Լուսավորչի որդին՝ Վրթանեսը, որը վախճանվեց 341 թվականին: Յուրաքանչյուր, միջնադարյան արշարյաները, որտեք խոսում են նշյալ ժամանակահատվածի Հայ եկեղեցու հետ կողմով իրադարձությունների մասին, շատ քիչ տեղեկություններ են Հաղորդում մեզ Վրթանես կաթողիկոսի և Տիրան արքայի Հարաբերությունների վերաբերյալ: Հայտնի է, որ

Տիրանի գահակալումից սկսված՝ երկրում հեթանոսական նախարարների թիվն ավելանում էր, որը խիստ բացասական երևույթ էր: Եվ արդեն այս ժամանակաշրջանից որոշակի լարվածություն է սկսվում պետության և եկեղեցու Հարաբերություններում: Բացի այդ, ինչպես նշում է պատմաբան Լեոն, Տիրան արքան իր հոր կամ պապի ջերմեանդությունը չունեք քրիստոնեական կրոնի նկատմամբ և չէր հայտնում հեթանոսներին¹: Հայտնի է նաև, որ Վրթանես կաթողիկոսի դեմ ղաղադրություն է կազմակերպվել Աշտիշտում, որին համապարտ մասնակից են եղել նաև որոշ իշխանական ուժեր: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ վերջինս պատարագ էր մատուցում: Բարեբախտաբար այդ ղաղադրությունը հաջողություն չունեցավ: Ըստ մեզ՝ ղաղադրված թե այն հովանավորված լինեք Հայոց արքայի կողմից, այնպես ղաղադրված թե կաթողիկոսը փրկվեք: Բացի այդ՝ ղաղադրված ժամանակահատվածում զեռուս չկային սուր տարաձայնություններ կաթողիկոսի և Տիրանի միջև: Չմոռանաք նաև, որ Վրթանեսը Գրիգոր Լուսավորչի որդի էր, և նրան շարքից հանելը այդքան էլ հեշտ գործ չէր: Եվ բացի այդ, եթե նման բան լինեք, ապա Հաղիթ թե այն վրիպող պատմիչների ուշագրությունից: Պարզապես դա կատարվել էր իրանական կողմնորոշում ունեցող խմբավորման կողմից: Մտաքան դեպքում կաթողիկոսը շարունակել էր եկեղեցու զործունեությունը, և պետական կառավարման Համագործակցությունը չէր խանգարում նրան: Իրավիճակը փոխվեց 341 թ., երբ Տրդատ կաթողիկոս ընտրվեք Գրիգոր Լուսավորչի թու շուտիկը²: Պատմիչ Փավստոս Բուզանդի վկայությունը՝ Հուսիկ Հայրապետը առերթով զեռուս քրիստոնեացի էր, բայց առույշ և հոգով մարտու. «Ձի առուրքք մանուկ, բարձր հասակու և սուր և պայծառ հոգով...»³: Շատ կարևոր է նաև նկատել, որ նշյալ ժամանակահատվածում Հայաստանի կրոնական իրավիճակը շատ բարդ էր: Ինչի որտն այն է, որ թեև Հայաստանն արդեն ընդունել էր քրիստոնեությունը, այնուամենայնիվ, քնակչություն մի մասը զեռուս ղաղադրել շարունակում էր երկրպագել հեթանոսությունը: Վրժակը հասակայես մասը էր մարտասույնից ղաղադրված, որտեղ վերահսկողություն ավելին թույլ էր: Բացի այդ՝ հեթանոսական ուժերին քաղականին յուրեք աջակցություն էր ցույց տալիս Հայաստանի ղարավոր հարևանը՝ Պարսկաստանը:

Վերադառնալով մեր խնդրին՝ նշենք, որ սկզբնական շրջանում կաթողիկոսի և արքայի Հարաբերությունները քաղականին լավ էին: Սակայն

¹ Լեո, Երկրի ժողովուսն, Խ. Ա. Երևան, 1966, էջ 437:
² Վարդանյան, Կայց եկեղեցից վաղ միջնադարի քաղաքական խաղաղիներում, Վարդանյան, 2005, էջ 89:
³ Փավստոսի Քիչակնեցույց, Պատմիչից կայց, Երևան, 1987, էջ 50:

դրան խոնդարում էին Հեթանոսամեծ ուժերը: Ինչպես իրավախորհրդի կողմ է պատմարան 4. Վարդանյանը, Հեթանոսամեծ նախարարների թիվը Հայաստանում բաղկաներին մեծ էր. քանի որ նրանք մեծ մասը կողմնորոշվում էր դեպի Պարսկաստանը: Իր Հերթին արքան էլ չէր ցանկանում ընդհարվել խոշոր նախարարական տների Հետ և սկսում է Հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել այդ իշխանների նկատմամբ: Ինչպես երևում է, այս քաղաքականությունն էլ մեծաուս չէր Հայ եկեղեցուն, որը նոր էր կազմավորվում և պարսկամետ: Բացի այդ՝ նման Հանդուրժողական քաղաքականությունը Հետագայում կարող էր նպաստել Հեթանոսների թվաքանակի աճիկանալու: Պատմիչ Փավստոս Բուզանդը մեզ տեղեկացնում է, որ Տիրան արքայի որդի ավագ նախարարները խելացի կյանք էլին վարում, պահանջումներն էին զորմուն, զուր տեղը արյուն էին թափում, մի շարք մեղքեր զորմուն և ուշադրություն էլին զարմունում նաև Հայոց Հայրապետի խրատներին¹: Նման պայմաններում կաթողիկոս ստիպված դիմում է Հայոց արքային՝ Հարցին ընթացք առաւ. Համար, սակայն զուր էին նրա ջանքերը: Բանն այն է, որ Ֆեոդալական Հարաբերությունների զարգացման Հետևանքով սրվում ևս առաջում Կարգավիճակն տները իրենց տեսեսական Հզորությունը, զորքերով քիչ էին գիշում արքային: Եվ չցանկանալով նոր արյունահեղությունների առիթ տալ՝ արքան Հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում որոշ Հայ նախարարների նկատմամբ: Բացի այդ՝ արքան չէր ցանկանում նեղել Հեթանոսամեծ իշխաններին, որպեսզի չուժեղացնի Հարեան Պարսկաստանի դժգոհությունը: Եվ այս պայմաններում սկսում են սրվել մի կողմից Տիրան արքայի և արքունիքի, իսկ մյուս կողմից՝ Հուսիկ Հայրապետի Հարաբերությունները: Երկուսով Հարաբերությունների բարդացման խնդրում մի շատ կարևոր տեսակետ է Հայտնում Լեոն: Հետազոտողը նշում է, որ Հուսիկ կաթողիկոսը Տիրան արքայի փեսան էր, սակայն ամուսնական զուգրի Հարաբերություններն այդքան էլ լավ չեն դասավորվել, որի արդյունքում արքայի դուստրը Հետացել էր Հուսիկին²: Կարծում ենք՝ Հետազոտողի կարծիքը տեղին է. քանի որ շատ Հավանական է, որ ամուսնական զուգրի անհաջող Հարաբերությունները չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չունենալ արքայի և կաթողիկոսի միջև: Դրանք շուտով ողբերգական ավարտ են ունենում Հայոց կաթողիկոսի Համար: Ինչպես նշում է ճանաչված պատմաբան Մ. Օրմանյանը, Հուսիկ կաթողիկոսի մահը ընդհանուր կերպով

տեղի չունեցավ. «Յուսիկի մահը բնական կերպով տեղի չունեցաւ, այլ իր Հովուական և Հայրապետական նախանձալուցութեան նահատակ եղաւ և բունական մահուամբ վախճանեցաւ, նշխիրև Հայոց թագավոր և իւր անբնապոյն Տիրանի մեղքով»³: Նրա օպտուսիսյան դրվագի մասին խոսում է նաև Ե. Պետրոսյանը՝ նշելով, որ երբ մի տունական օր թագավորը դուռն էր կնկնցի, Հուսիկ կաթողիկոսը արցնելու է նրա մուտքը՝ աւելով, թե զուտրման չես կնկնցի մտնելու⁴: Արքան, չկարողանալով տանել այդ վիրաբույրանքը, Հրամայում է քրանձ տեղիով նահատակել նրան⁵: Ահա նաև, Հուսիկ կաթողիկոսի մահը մեծ Հարված էր Հայոց եկեղեցուն և նրա Հեղինակությունը, սակայն կը էր պետք ստեղծված իրավիճակից դուրս գալու: Պատմությունը Հայտնի է, որ նահատակված կաթողիկոսն ունիւր երկու որդի՝ Պապը և Ալմաստիկոսը, որոնք կաթողիկոս անթոռ առաջին թեկնածուներն էին: Ցավոք նրանց մասին միջնադարյան սկզբնադարյան լուրերն այդքան լավ խոսքեր չեն առում: Բացի այդ՝ նրանցից և ոչ մեկը չցանկացավ Հողերական դասում, որպեսզի ապագայում շարունակի իր նախնիների գործը: Եվ բնականաբար, նման անմիջք արժանի էլին նաև կաթողիկոս անթոռին: Հարց է առաջանում, թե ով պետք դառնաւր կաթողիկոսի Հաջորդ թեկնածու: Խնդիրն այն էր, որ Լուսավորչի տոհմից այլևս կար Հարմար թեկնածու: Եվ այդ մասին տեղյակ էր նաև թագավորական իշխանությունը: Ասեղծված պայմաններում բնորոշություն կանչ է առնվում Գրիգոր Լուսավորչի աշակերտ Դանիելին՝ որը, որը նախնիներում իրեն բավականին լավ էր դրսևորել որպես Հողերական: Եվ այս բնորոշությանը երկրորդ կողմ էր նաև Հոսանման խմբավորումը: Կարևոր ենք Համարում նաև նշել, որ երբ Դանիել Լուսին դարձավ Հայոց կաթողիկոս, մեծ նուսնջով շարունակել էր նախորդների քաղաքականությունը՝ փորձելով մեծ Հարված Հասցնել Հեթանոսամեծ իրեր ուժերին: Բացի այդ՝ նոր կաթողիկոսը շարունակեց Հեթանոսամեծ նախարարներին կշտամբելու քաղաքականությունը, որի արդյունքում արքունիքի և եկեղեցու Հարաբերությունները կրկին սրվեցին: Հասկանալի է, որ նոր կաթողիկոսի վարած քաղաքականությունը Հայ նախարարական տների մեծ մասը՝ կտք էր զգուհ լինել, ուստի և նրանք նախ չեն ենթարկվում կաթողիկոսին, բողոքում են արքային նրա զորմունություններից: Հետաքրքիր է նաև այն, որ երբ կաթո-

¹ Վ. Վարդանյան, 624, աշխ., էջ 89:
² Լույս տեղում:
³ Փաստոս Բուզանց, էջ 51:
⁴ Լեո, 624, աշխ., էջ 439:

¹ Մ. Օրմանյան, Ազգայաբան, Երվանդի, հ. Ա, 2001, սյուն 159:
² Ե. Պետրոսյան, Դայ եկեղեցու պատմություն, Մաս Ե (սկզբից մինչև 1441 թվական), Ա. Երմաթով, 1995, էջ 44-45, Դայ եկեղեցու պատմություն, պատմորական հրատարակություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 86:
³ Լույս տեղում, Դայ ժողովրդի պատմություն, խմբագրություն Ա. Սելվր-Բաշաշյան, Երևան, 1976, էջ 233:

դիվանին տանում են արքայի մոտ, վերջինս Համարձակորեն սկսում է Հանդիմանել նաև նրան՝ հրեան նեղելով կծու խոսքեր: Ինչպես նշում է պատմաճարհ Մովսես Խորենացին, կաթողիկոսի հետ քայլ մեծ գայրույթ է առնել բերում Հայոց արքայի մոտ, և շուտով Տիրան արքայի Հրամանով Դանիել կաթողիկոսին խզղաժամ է են անում¹: Պատմական այս կարևոր իրադարձությունները, բացի Մովսես Խորենացուց, մեզ տեղեկացնում է նաև Փավստոս Բուզանդը պատմիչը:

Փաստորեն Հայոց եկեղեցին գրկվում է ինքնուրույն քաղաքականության մարդը դեկամարից:

Ամեն դեպքում պետք է նշել, որ Հայոց արքայի կողմից երկու ինքնուրույն և խնայքի կաթողիկոսներին ապարհզից Հեռացնելը այն նպատակ ուներ, որ եկեղեցին դառնա պետական իշխանությանը Հյուս-Հասպունի ինտրուսուս: Այն, որ թագավորական իշխանությունը միշտ էլ ձգտել է այդ կարևոր քաղաքական ինստիտուտը պահել իր Նսկրդուժայան տակ, դա փաստ է, սակայն նման մեթոդներով Հարցի լուծումն անհնարաբար էր:

Ի վերջո կրկին առջև եկավ մեր կաթողիկոսի ընտրության խնդիր: Ըստ Փավստոսի՝ նոր կաթողիկոս ընտրվում է Համար Հրավիրվեց մեծ ժողով, որին մասնակցում էին թագավորը, նախարարները և բարձրաստիճանի Հոգևորականությունը: Ու թեև ժողովի մասնակիցները Հստկանում էին, որ Հայ եկեղեցու ղեկավարը պետք է լինի Գրիգոր Առևստավորչի սուզմեց սերող Հոգևորականը, սակայն այլ էլք չունենալով՝ ընտրեցին Փառանին: Հայ եկեղեցու պատմունկն նշանավոր Հեռազոտող Մ. Օրմանյանը այս իրադարձություններին մասին նշում է Հետևյալը. «Երբոր Դանիելի սպանութեամբ եւ Յուսիփի որդիներուն վերջնական դիմադրութեամբ, կաթողիկոսութեանն Հասանական ընտրելիները պակասեցան եւ ուրիշի դիմել Հարկ եւս, կամ եղև ամենեցուն առՀասարակ, որ Առևստավորչի ազգատունէնն Հեռանալու չէ, եւ պէտք է, որ ի նմին տանէ իշխանութեան Գրիգորի գոցն, որ կայցի նա զամբոս Հաջցն, եւ այս սկզբունքով կաթողիկոսութեանն արժանի Համարուեցաւ Փառնէ Աշտիշատեանը, որ սոկուոյն ասանելորդն էր...»: Մասնագիտական գրականության մեջ որոշ Հայագիտ Հեռազոտողներ կարծիք են Հայտնում, որ Փառնը Հեռավոր ազգակցական կապեր է ունեցել Առևստավորչի տան հետ²:

Այսպիսով, նոր կաթողիկոսն ընտրվեց Հայոց արքայի կամքով և այդ փաստը կարևոր դեր էր խաղալու պետության եկեղեցու Հարաբերութեան

յունենքի կարգավորման մեջ, ինչը տվյալ պատմական ժամանակաշրջանում չափազանց կարևոր էր ոչ միայն պետության և եկեղեցու, այլև ողջ Հայ ժողովրդի Համար:

Ափաստ միայն, որ միջնադարյան պատմիչները շատ քիչ տեղեկություններ են մեզ տրամադրում Փառնի կաթողիկոսի ժամանակաշրջանի պետության և եկեղեցու Հարաբերությունների վերաբերյալ: Հայտնի է միայն, որ Հուսիկ և Դանիել կաթողիկոսները սպանությունից Հետո, ընտրված նոր կաթողիկոսը՝ Փառնը, (348–352) դառնում է արքայի Հյուս կամակատարը և սկսում է նրան ընկերակցել: Ամենայն Հավանականությամբ նման ձևով կաթողիկոսը փորձում էր կարգավորել թագավորական իշխանության և եկեղեցու միջև բռնկված վեճը: Ինչ վերաբերում է Տիրան արքային, ապա պետք է նշել, որ նրան էլ կյանքի վերջում դժբախտություն էր սպասվում: Ընտանով պատերազմ է սկսվում Հայաստանի և Պարսկաստանի միջև, և թշնամու զորքերին Հանդուրում է ներթույմելով Հայաստան՝ ձերբակալել Տիրան արքային և տանել Տիրոս: Ըստուհը Տիրանի աչքերը Հանել է տալիս շեկացած երկվթով, որից Հետո վերջինս թողնում է քաղաքական ասպարեզը:

Այսպիսով պետք է նշել, որ թեև Տիրան թագավորի Հակակամման ժամանակաշրջանում մեծ Հարված Հասցվեց Հայոց եկեղեցուն և նրա Հեղինակությունը, այնուամենայնիվ եկեղեցին կարողացավ դիմադրվել այդ փորձություններին ու շարունակեց առաջ գնալ և կարևոր դեր խաղալ մեր ժողովրդի Հոգևոր կյանքում:

Summary

The following article is devoted to one of the most important issues of the early period of the history of Armenian church, that is to say to the relations of the state and church. With the detailed observations of the sources and the presence of scientific literature an attempt was made to represent conflicts between state and church during the reign of king Tiran. A special attention was paid to the problems during the time of Catholicos Husik and Daniel. In the end we have tried to seem up the whole work.

¹ Մովսես Խորենացի, Դայոց Պատմությունը, Գլուխ 3, երևան, 1961, էջ 272:
² Մ. Օրմանյան, Ի. Ա. սյուճ, 169:
³ Մ. Օրմանյան, Ի. Ա. սյուճ 169, Բ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 461, Մ. Օրմանյան, Դայոց եկեղեցու, Կառավարչություն, 1911, էջ 38:

ԲՈՒԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամուշավան եպ. ժամկայան - Ամուսնաընտանեկան իրավունքի կանոնակարգում և աշխարհիկ դրսևորումները հայոց մեջ 7

Լ. Սիմոնյան, Կ. Գովհաննիսյան - Գոգեզավատի թծայվ մանրամասնումների շան մոտիվը 21

Գ. Արիստակես արք. Այվազյան - Ա. Կյուրեղ Ալեքսանդրացին հայ մկնաբանական գրականության մեջ 46

Լ. Պողոսյան - Ալեարկ Անանիա Երևակացու ինքնակենսագրականից 64

Լ. Աղայան - Խորհրդանշանի աստվածաբանությունը հայ միջնադարում 72

ԿՐՈՆԱԿՐԻ ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ՔԱՆԱԾՅԱՆ - Ալեքսանդրիական հակաապոլինարական քրիստոսաբանության հիմքերը 89

Ա. Գ. ՔԱՆԱԾՅԱՆ - IV դարի 30-50-ական թվականների երրորդաբանական հոսանքների դասակարգման հիմնադրույթը 115

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ - Գայոց դիցաբանության նոր շեռտի ուսումնասիրության մի քանի առանձնահատկություններ 132

Գ. Ա. ԱՄՐԱՅՅԱՆ - Էրիզնիսական հակաերրորդաբանության ծագումը եվ վարդապետական առանձնահատկությունները 142

Գ. Ա. ԱՄՐԱՅՅԱՆ - Քրիստոնեական գնոստիկության հակաերրորդաբանական առանձնահատկությունները 155

Վ. Ա. ՊՐՈՂՍՅԱՆ - Կապադովկիական հակաապոլինարական քրիստոսաբանությունը 168

Գ. Սլրոյան - Գոգելոր անվտազություն 185

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆ - ԵԿԵՂԵՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Գովհաննիսյան - Գակո Արևապարտի Նշանադրոշմի վերածության փորձ 197

Սասուն Դարբնությունյան - Դրվագներ Սիմեոն Երևանցու գործունեությունից պատմական իրադարձությունների համատեքստում 204

Լ. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ - Եկեղեցական ներիակությունները հետաբողեոնական առաջին տասնամյակներին 213

Լ. ԱՄՂԱԿՅԱՆ - Պապականությունը Ֆրանսիական գերության շրջանում 221

Լ. ԱՄՂԱԿՅԱՆ - Արևմտյան եկեղեցին XIV դարում (Ֆրանսիայի հետ բախման սկիզբը) 228

ՊԼԱՏՈՒԹՅՈՒՆ

Գ. Գ. Ավետիսյան, Ն. Գ. Ավետիսյան - Որբարտական քաղաքաշինության հիմնախնդիրները 237

Ավետիս Գ. Քալաշյան - (գրախոսություն) Նիկողայոս Արոնց 259

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ (գրքի տեսություն) - Գայ եկեղեցու համազգիտարան, պոպուլյար, Ամենայն Գայոց Կաթողիկոսներ 269

Արա Գովհաննիսյան - Պետության և եկեղեցու հարաբերությունները Տիրան քաղաքի գահակալման ժամանակաշրջանում (4-րդ դարի 30-40-ական թվականներ) 278

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏ

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

Գիտական հոդվածների ժողովածու
Դ

Կազմի և համակարգչային ձևավորումը Տիրան Ապիկյանի

Արտագրված է տպագրության 22. 07. 2011 թ:
Չափեր 70x108 1/16, տպագրությունը օֆսեթ, բուրդը օֆսեթ,
տպաբանակ՝ 500

ԵԳԳ իրատարակություն, Երևան, Ալ. Մանուկյան 1